

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
2014-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԼԱՆԻ**

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՄՐԻ 2014թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	3
2.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
3.	ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	6
4.	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	10
4.1.	Կրթություն	10
4.2.	Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր	17
4.3.	Առողջապահություն	22
4.4.	Մոցիալական պաշտպանություն, երեխաների իրավունքների պաշտպանություն	27
5.	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	35
6.	ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	40
7.	ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ	42
8.	ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	49
9.	ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	56

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՌ	Ազգային անվտանգության ռազմավարություն
ԱԱՀՀՀ	Առավել աղքատ համայնքների համալիր հետազոտություն
ԱԽ	Աշխատանքային խումբ
ԱՄԳ	Աղքատության մասնակցային գնահատում
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԳԷՖ	Գլոբալ էկոլոգիական ֆոնդ
ԵՄ	Եվրամիություն
ԿԶԾ	Կայուն զարգացման ծրագիր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՄԱԿ ԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՄԺԾԾ	Միջին ժամկետ ծախսային ծրագիր
ՄԱՍՀ	Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթիվ
ՄԱԿ ՀՊԾ	ՄԱԿ-ի համաշխարհային պարենի ծրագիր
ՄԶԱՀ	Մարդկային զարգացման ազգային հետազոտություն
ՄԶԳ	Միջազգային զարգացման գործակալություն
ՄԶՄԿ	Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ՄՄՈՒՀ	Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
ՄԶԾ	ՀՀ Շիրակի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր
ՄՎ	Մոնիտորինգ և վերլուծություն
ՆԴՀ	Նախադպրոցական հաստատություն
ՄՕՏԳ	Սոցիալական ծառայության տեղական գրասենյակ
ՏԱՊ	2012 թվականի տարեկան աշխատանքային պլան
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՓՄԶ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՓՄԶ ԶԱԿ	Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի /այսուհետ Ծրագիր/ 2014 թվականի առաջին կիսամյակի աշխատանքային պլանի /այսուհետ ՏԱՊ/ տարեկան հաշվետվությունը կազմվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային զարգացման ծրագրի մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի կողմից:

Ծրագրի ընդհանուր բնութագիրը

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 6 -ի թիվ 112-Ն որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը:

ՏԱՊ-ի նպատակներն են

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի իրականացման 2014թ. առաջին կիսամյակի աշխատանքային պլանի հիմնական նպատակն է Շիրակի մարզի զարգացման ծրագրի <<Տարեկան աշխատանքային պլանն>> ընդհանուր գծերով նկարագրելը: ՄԶԾ-ում 2014-2017 թվականների համար սահմանվել են աղքատության հիմնական պատճառները և ուրվագծվել են աղքատության հաղթահարմանն ուղղված միջոցառումների պլանը: Միջոցառումների պլանում տեղ են գտել միջոցառումներ, որոնց նպատակն է աղքատության հաղթահարումը՝ տնտեսական աճի և մարդկային զարգացումը խթանելու միջոցով: 2014թ. տարեկան աշխատանքային պլանով նախատեսվում էր՝

- Համախմբել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ների գերակա նպատակների իրականացման շուրջ
- Կապել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ների արդյունքների հետ՝ <<տրամաբանական հենքի>> համակարգի օգնությամբ
- Ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում
- Սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումներն իրականացնելու համար
- Սահմանել դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

2014թ. Ծրագրի իրականացման մոնիտորինգի աշխատանքները կառուցվել են ՏԱՊ-ում արձանագրված հիմքերի վրա: Բոլոր նախատեսվող միջոցառումները մանրամասնեցված են <<Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների տրամաբանական հենքում>>:

2014թ. տարեկան աշխատանքային պլանի մոնիտորինգի իրականացման ընթացքում ստացվել են հետևյալ արդյունքները.

- Բարձրացել են մարզի տնտեսության բոլոր ճյուղերի աճի տեմպերը, արձանագրվել է բնակչության եկամուտների աճ և աղքատության կրճատում

- Բարձրացել են գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալները և ապրանքայնության մակարդակը
- Աճել է բնակչության զբաղվածությունը և նվազել գործազրկության մակարդակը, բարձրացել է բնակչությանը տրամադրվող սոցիալապայթույթունների որակը
- Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում
- Բարելավվել է մարզի բնապահպանական իրավիճակը, զարգացել են մարզային և համայնքային ենթակառուցվածքները
- Ակտիվացել է քաղաքացիական հասարկության մասնակցային գործընթացը, բարձրացել բնակչության իրազեկվածության և տեղեկատվության աստիճանը

Օրագրի ֆինանսավորումը

2014 թվականի ՏԱՊ-ով նախատեսվել է իրականացնել 230 միջոցառումներ, որի համար անհրաժեշտ ֆինանսավորումը կազմում էր ավելի քան 24020709.5 մլրդ. դրամ, այդ թվում ՀՀ պետական բյուջեից հատկացումներ՝ 10.9 մլրդ. դրամ: ՄԶԾ 2014թ. աշխատանքային պլանով նախատեսված և լրացուցիչ միջոցառումների կատարումը 2014 թվականի արդյունքներով ներկայացված են հավելված 2- ում:

Օրագրի մոնիտորինգի և գնահատման հայեցակարգը

ՄԶԾ-ն ունի մոնիտորինգի և գնահատման համապարփակ հայեցակարգ, որը բաղկացած է 4 հիմնական բաղադրիչներից.

- 1.Քաղաքականության ուսումնասիրում
- 2.ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերանայում
- 3.Մասնակցային մոնիտորինգ և գնահատում
- 4.Ազդեցության գնահատում:

Օրագրի հաշվետվության կառուցվածքը

ՄԶԾ միջանկյալ հաշվետվության ոլորտային բաժինների կառուցվածքը բաղկացած է 4 հիմնական բաժիններից.

- 1.Քաղաքականության վերլուծություն
- 2.Իրականացման առաջընթացը
- 3.Խնդիրները
- 4.Քաղած դասերը և հետագա քայլերը:

Քաղաքականության վերլուծություն բաժնում ամփոփվել են ոլորտի համար տարվա կտրվածքով առաջարկված ցուցանիշները և միջոցառումները:

Իրականացման առաջընթացը բաժնում նշվել են 2014 թվականի ձեռքբերումները և դրանք կապվել ՏԱՊ-ի արդյունքային ցուցանիշների հետ:

Խնդիրները բաժնում նկարագրվել են տարվա ընթացքում ծագած խնդիրները և խաչընդոտները:

Քաղաքացիները և հետագա քայլերը բաժնում բացահայտում են հետագա այն խնդիրները, որոնք բյուջեի և պլանավորման գործընթացի հիմքը կհանդիսանան:

3. ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

3.1 Քաղաքականության վերլուծություն

Փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ուղղությամբ իրականացվող քաղաքականության շնորհիվ ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Շիրակի մարզում արձանագրվել է ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիշների անընդմեջ աճ:

Նշանակալի է ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը նոր աշխատատեղերի ստեղծման գործում:

Շիրակի մարզի տնտեսական և սոցիալական զարգացման գործում այսօր առաջնահերթ տեղը պատկանում է փոքր և միջին ձեռնարկատիրությանը, որոնց դերը առանձնահատուկ է մարզի տնտեսության վերականգնման և զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման և միջին խավի ձևավորման գործում:

Հարկ է նշել, որ Հայաստանում իրականացվող բարեփոխումները որոշակի ազդեցություն են ունեցել նաև ՀՀ Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Փոքր ու միջին ձեռնարկատիրության և մասնավոր հատվածի զարգացումը հանդիսանում է նաև մարզի համայնքների զարգացման անհամամասնությունների հաղթահարման և համաչափ զարգացման ապահովման հիմնաքարը:

Այս նպատակով ՀՀ Շիրակի մարզի զարգացման 2014-2017թթ. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. տարեկան աշխատանքային պլանով /ՏԱՊ/ նախատեսվել էր ներգրավել այդ գործընթացներում տեղական ինքնակառավարման մարմիններին և գործարար համայնքի ներկայացուցիչներին, իրականացնել մասնավոր հատվածի զարգացման ծրագրային միջոցառումներ, բարձրացնել գործարար ակտիվությունը բիզնեսի կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով:

Նախատեսվում էր բարձրացնել ՓՄՁ զարգացման պետական աջակցության արդյունավետությունը, դարձնել այն լիարժեք, հասցնել մարզի բոլոր համայնքներին, նպաստել մարզի տարածաշրջանների համամասնական զարգացմանը, բնակչությանը մատուցել բարձրակարգ ծառայություններ և ապահովել ծառայությունների հասանելիության աճը:

3.2 Իրականացման առաջընթացը

ՀՀ Շիրակի մարզում գործում են <<Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն>> հիմնադրամի Շիրակի մասնաճյուղը և փոքր և միջին ձեռնարկատիրությանը աջակցող այլ կառույցներ:

2014 թվականին շահագործման հանձնվեց Գյումրու տեխնոլոգիական կենտրոնը, որը տեխնոլոգիական բիզնեսի զարգացման պահանջներին համապատասխանող աշխատանքային տարածքների ու բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքներով հագեցած ամբողջական համալիր է: Կենտրոնում իրականացվում են մի շարք կրթական ծրագրեր՝ մուլտիմեդիայի, ճարտարագիտական և եռաչափ մոդելավորման լաբորատորիաներում:

Բելոռուսի բարձր տեխնոլոգիաների պարկի հետ համագործակցություն է իրականացվում տեղեկատվության և փորձի փոխանակման, պարկերի ընկերությունների արտադրանքը երկու երկրների շուկաներ դուրս բերելու, կրթական ծրագրերի համատեղ մշակման և այլ ուղղություններով:

D-link հանրահայտ ընկերության կողմից Գյումրիում իրականացվում է շուրջ 8.5 մլն ԱՄՆ դոլարի ներդրումային ծրագիր: Ընկերությունը կապահովի կենտրոնի փոխհամագործակցությունը Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի հետ և կդարձնի այն կենտրոնի անբաժանելի մասը:

2014 թվականին ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերվող պետական աջակցությունը հիմնականում իրականացվել է հետևյալ ուղղություններով՝ Հայաստանում գործարարությամբ զբաղվելու հետ կապված ցանկացած տեղեկատվության տրամադրում, բիզնես խորհրդատվության և ուսուցման ապահովում, իրացման խթանում, սկսնակ գործարարներին աջակցություն, հետազոտական և զարգացման ծրագրերի իրականացմանն աջակցություն, վարրկային երաշխավորությունների տրամադրում, սեփական կապիտալի ֆինանսավորում և սկսնակ գործարարներին վարկային երաշխավորությունների տրամադրում:

Աջակցություն սկսնակ գործարարներին ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի UNIDO ծրագրի ֆինանսավորմամբ՝ թվով 6 սուբյեկտների հատկացվել է - 16 մլն ՀՀ դրամ, ՓՄՁ ԶԱԿ-ի ֆինանսավորմամբ թվով 5 սուբյեկտների հատկացվել է - 11 մլն ՀՀ դրամ, որոնցից 3-ը արդեն գրանցված բիզնեսներ են եղել:

Տեղեկատվական աջակցություն ծրագրի շրջանակներում թվով 400 ՓՄՁ սուբյեկտների մատուցվել են ծառայություններ՝ կապված իրավաօրենսդրական դաշտի փոփոխությունների հետ, ինչպես նաև անհատական խորհրդատվություններ:

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց ծրագրի շրջանակներում թվով 120 ՓՄՁ սուբյեկտներ ստացել են տեղեկատվություն միջազգային համագործակցությունների առաջարկների և կազմակերպվող միջոցառումների հետ կապված: Մեկ համագործակցության առաջարկ տեղադրվել է ՁԵՑ ցանցում, 14 սուբյեկտով համալրվել է միջազգային համագործակցության ներուժ ունեցողների հիմնապաշարը:

Տեղական Տնտեսական զարգացում ծրագրի շրջանակներում թվով 13 համայնքներում անցկացվել է հարցում՝ համայնքների առկա տնտեսական իրավիճակը գնահատելու և տնտեսությունների մրցակցային առավելությունները բացահայտելու համար:

Գյուղտեխնիկայի տրամադրում ծրագրի շրջանակներում տրամադրվել է 4 գյուղատնտեսական տեխնիկա, մասնավորապես <<Բելոռուս ՄՏՁ 80.1>> տրակտոր: Կատարվել են այցելություններ համայնքներ, ուսումնասիրվել է յուրաքանչյուր համայնքը, համայնքների ակտիվ գործարարներից կազմված խմբային հանդիպումների ընթացքում բացահայտվել են համայնքի խնդիրները, առավելությունները և կազմվել են համապատասխան արձանագրություններ:

3.3 Խնդիրները

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործող ՓՄՁ սուբյեկտների ընդհանուր թվում ՀՀ Շիրակի մարզի ՓՄՁ սուբյեկտները կազմում են ընդամենը 5.2 տոկոս, ինչը դեռևս բավարար չէ և չի նպաստում մարզի տարածաշրջանների համամասնական զարգացմանը: Փոքր ու միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության ծրագրով իրականացվող առկա միջոցառումները էականորեն չեն նպաստում նաև մասնավոր հատվածի կայուն զարգացմանը:

Դեռևս ցածր է մնում մարզի տարածաշրջանների գրավչությունը օտարերկրյա ներդրումների ներգրավման համար, բացակայում է նպաստավոր և խրախուսող օրենսդրական դաշտը:

Թողարկվող արտադրանքի ընդհանուր ծավալում փոքր է արտահանվող արտադրանքի տեսակարար կշիռը, իրացման շուկաները սահմանափակ են կամ գրեթե բացակայում են, առկա են նոր շուկաներ մուտք գործելու դժվարություններ, չի իրականացվում շուկայի մշտական և լիարժեք ուսումնասիրություն:

Բանկերի կողմից առաջարկվող վարկերի պայմանները, տոկոսադրույքները, գրավի լիկվիդայնության որոշման չափորոշիչները թույլ չեն տալիս լուրջ կապիտալ ներդրումներ կատարել կամ ընդհանրապես ցանկալի պայմաններով և ժամկետներում վարկ ստանալ:

Վարկերը նպաստավոր են միայն առևտրի և ծառայությունների ոլորտներում, իսկ արտադրության ոլորտում նոր սարքավորումների ձեռքբերման և այլ կապիտալ ներդրումներ կատարելու համար անհրաժեշտ են երկարաժամկետ վարկեր, ավելի ցածր տոկոսադրույքով և մարման արտոնյալ ժամանակահատվածով:

Ոլորտի զարգացմանը խանգարում է նաև ենթակառուցվածքների դեռևս անբավարար վիճակը, ճանապարհները, ջրամատակարարումը, էներգակիրների բարձր սակագները և այլն:

3.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Առկա խնդիրների պարագայում Մարզային Զարգացման Ծրագրի ՓՄՁ աջակցման ծրագիրը իրագործվում է և այս ուղղությամբ 2014թ. առաջին կիսամյակում առաջընթաց է արձանագրվել:

ՓՄՁ աջակցման ծրագրի արդյունավետ շարունակությունը կարևոր նախադրյալ կհանդիսանա ՓՄՁ զարգացման նպաստավոր հնարավորությունների ու բարենպաստ մրցակցային դաշտի ստեղծման, մարզի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման, գործարար միջավայրի բարելավման, ներդրումային ակտիվության խրախուսման, մարզում մասնավոր հատվածի զարգացման ռազմավարության մշակման, ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերի իրականացման համար:

Այս նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է բարելավել գործարար միջավայրը, դրան գուզրնթաց ստեղծել ՓՄՁ զարգացման նպաստավոր, հավասար հնարավորությունների ու բարենպաստ մրցակցային դաշտ, կրճատել համայնքների միջև եղած անհամամասնությունները:

Կարևորվում է ընդլայնել գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտների ձեռնարկատիրությամբ զբաղվելու հնարավորությունները, հատկապես սահմանափակ կարողություններով անձանց համար և նախապատվություն տալ մարզի հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում ՓՄՁ սուբյեկտներին:

Մարզի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար առանձնահատուկ կարևորվում է Գյումրի, Արթիկ և Մարալիկ քաղաքների տնտեսական զարգացման տեմպերի արագացումը, ինչը կնպաստի մարզի տարածաշրջանների և համայնքների համամասնական զարգացմանը, ինչպես նաև Գյումրի քաղաքի ազատ տնտեսական գոտու ստեղծումը, այն գործարար և ներդրումային միջավայրի կենտրոնի վերածումը, ներդրումային ակտիվության խրախուսումը:

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. ՏԱՊ-ի ՓՄՁ և մասնավոր հատվածի ոլորտի 2014թ. առաջին կիսամյակի գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի փաստացի կատարված ծախսեր

Ոլորտը /Ֆինանսավորման աղբյուրը	2014թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014թ. նախատեսվածի ատեսական բյուջեն	Փաստացի ֆինանսավորման չափը 01.07.2014թ. դրությամբ	Սլն.դրամ
				Կատարման տոկոսը %
ՓՄՁ և մասնավոր հատված	1550.0	1350.0	1480.0	109.6
<i>որից՝</i>				
ՀՀ պետական բյուջե, այդ թվում				
սեփական միջոցներ				
վարկային միջոցներ				
միջ. կազմակերպություններ և դոնորներ	50.0	50.0	50,0	100
համայնքային բյուջե				
մասնավոր ներդրողներ	1500.0	1300.0	1430.0	110
Այլ աղբյուրներ				

4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

4.1 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

4.1.1 Քաղաքականության վերլուծություն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում կրթական քաղաքականությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտի օրենսդրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ԿԳՆ ծրագրերի միջոցով:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության համակարգում կատարված դրական փոփոխությունները՝ Շիրակի մարզում 2014 թվականի 1-ին կիսամյակում շարունակվել են ոլորտի արդիականացման աշխատանքները՝ նկատի ունենալով կրթության զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունները: Իրականացված բարեփոխումները հնարավորություն են ընձեռել հարթելու կրթության համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնել իրավիճակը և նախադրյալներ ստեղծել ոլորտի հետագա զարգացման համար:

Կրթության համակարգի հիմնական բնութագրիչներից են կրթության մեջ ընդգրկվածությունը, մատուցվող կրթական ծառայությունների որակը, մատչելիությունը, համապատասխանությունը:

Կրթության որակի և մատչելիության բարձրացումն ապահովելու նպատակով 2014 թվականի 1-ին կիսամյակում շարունակվել են հանրակրթական համակարգում իրականացվող բարեփոխումները: Ընդլայնվել է նախադպրոցական կրթության հասանելիությունը մարզի գյուղական համայնքներում, ապահովվել է վարչական աշխատողների և ուսուցիչների վերապատրաստումներ՝ նրանց որակավորման բարձրացումը մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը համահունչ դարձնելու և պարտադիր ատեստավորման նպատակով, շարունակվել են ուսուցիչների որակավորման տարակարգի շնորհման գործընթացները: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար մարզի ուսումնական հաստատություններում շարունակվել են համապատասխան կենսագործունեության միջավայրի, անհրաժեշտ պայմանների ստեղծման և մասնագիտացված մանկավարժական համակարգի ստեղծման աշխատանքները:

2014 թվականի 1-ին կիսամյակում շարունակվել է ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազայի համալրման, նորագույն տեխնոլոգիաների ներդրման աշխատանքները, գյուղական համայնքների դպրոցահասակ երեխաների երթևեկության կազմակերպումը, ինտերնետի ամբողջական և որակյալ ծածկույթի ապահովմանն ուղղված աշխատանքները:

4.1.2 Իրականացման առաջընթացը

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում գործում են 169 պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ, որոնցից 153-ը՝ մարզպետարանի, 16-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության: Դպրոցներից 55-ը (32%-ը) գործում են մարզի 3 քաղաքներում, 114-ը (68%-ը) 112 գյուղերում: Հանրակրթական դպրոցներից 30-ը գործում են բարձր լեռնային, 44-ը՝ լեռնային, 13-ը՝ սահմանամերձ բնակավայրերում:

Մարզի երկու հատուկ դպրոցներն իրականացնում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար նախատեսված կրթական ծրագրեր: Այդ դպրոցներում ընդգրկված են 123 երեխաներ:

Մարզում գործում են 46 համայնքային նախակրթարաններ, որտեղ հաճախում են 3936 երեխաներ: 2014 թվականի 1-ին կիսամյակում /մայիս-հունիս/ մասնագիտական վերապատրաստում են ստացել մախակրթարանների 130 դաստիարակ-մանկավարժներ:

Նախադպրոցական կրթությունը լինելով հանրակրթության զարգացման հիմք՝ կարևոր դեր ունի այդ տարիքի երեխաների համակողմանի զարգացման և դպրոցական կրթության համար հավասար մեկնարկային պայմաններ ստեղծելու գործում: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության

կառավարությունը 2008 թվականին հաստատեց «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագիրը», որի համաձայն Կրթության որակ և համապատասխանություն ծրագրի շրջանակներում 2011 թվականից Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Օգնություն նախադպրոցական տարիքի երեխաներին» ծրագրով իրականացվում է նախադպրոցական կրթության հետագա զարգացումը: Ծրագրի շրջանակներում մարզի հանրակրթական դպրոցներում գործում են 54 նախակրթարաններ՝ որոնցից 43-ը ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով, այստեղ հաճախում են 1278 երեխա: 2014 թվականի 1-ին կիսամյակում պետական բյուջեից նշված հաստատություններին հատկացվել է 56.232.0 հազ. դրամ: Մարզի գյուղական համայնքների ևս 11 դպրոցներ /366 երեխա/ դարձան ծրագրի շահառուներ, որոնց ֆինանսավորումը մինչև 2014-2015 ուսումնական տարվա մեկնարկը՝ համաձայն ծրագրի, իրականացվեց Համաշխարհային բանկի միջոցներով: Հետագա ֆինանսավորումը կապահովվի պետական միջոցների հաշվին: Ծրագիրը հիմնականում ընդգրկում է 5-6 տարեկան երեխաներ (դպրոցին նախապատրաստող խումբ) և ուսումնադաստիարակչական մասով իրականացվում է ամբողջությամբ: Ներառական կրթության որակի բարձրացման նպատակով 148 մանկավարժներ անցել են համապատասխան մասնագիտական վերապատրաստում:

Կրթության որակի բարձրացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է մանկավարժներին: Որակյալ և ժամանակի պահանջներին համահունչ կրթական ծառայություններ մատուցելու նպատակով 2014 թվականի 1-ին կիսամյակում իրականացվել է 511 ուսուցչի մասնագիտական առարկայական և 30 փոխտնօրենի վարչական հմտությունների կատարելագործման վերապատրաստում: Անհրաժեշտ է նշել, որ տարբեր կազմակերպությունների կողմից մարզի կրթության ոլորտում իրականացվող գրեթե բոլոր ծրագրերում առկա են եղել ուսուցիչների վերապատրաստման բաղադրիչներ:

2014 թվականի 1-ին կիսամյակում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ներառական կրթություն իրականացվել է մարզի 8 հանրակրթական դպրոցներում՝ 236 աշակերտի համար և ըստ նշված ծրագրի ՀՀ պետական բյուջեից մարզի համապատասխան ուսումնական հաստատություններին հատկացվել է 54.833.1 հազ. դրամ:

«Հանրակրթական ուսուցում», «Հատուկ ընդհանուր կրթություն», «Արտադպրոցական դաստիարակություն», «Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության», «Երեկոյան կրթություն» ծրագրերի տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության բաղադրիչները ֆինանսավորվել են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և իրականացվել են ամբողջությամբ:

2014 թվականի 1-ին կիսամյակում մարզի համայնքների ղեկավարների և հանրակրթական դպրոցների կողմից համակարգվել և վերահսկվել են դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, հաշվառվել են դասարանից-դասարան տեղափոխվող և յուրաքանչյուր կրթական մակարդակը ավարտող աշակերտները, կազմվել են 2014-2015, 2015-2016, 2016-2017 ուսումնական տարիների նախնական կոմպլեկտավորումները և սահմանված կարգի համաձայն ներկայացվել ՀՀ ԿԳ նախարարություն:

Հանրակրթության մատչելիության բարձրացման առումով էական է նաև հանրակրթության ոչ բոլոր աստիճանի կրթական ծրագրերը իրականացնող դպրոց ունեցող գյուղական համայնքների դպրոցահասակ երեխաների՝ հարևան համայնքի դպրոց տեղափոխելու երթնելության կազմակերպումը: Ներկայումս 2 համայնքներում և 3 բնակավայրերում դպրոցներ չեն գործում (դպրոցահասակ տարիքի սակավաթիվ երեխաներ ունենալու պատճառով), 7 համայնքներում գործում

են տարրական ծրագրեր և 16 համայնքներում՝ հիմնական դպրոցներ: 2014 թվականի 1-ին կիսամյակում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցներով կազմակերպվել է թվով 9 համայնքների միջին հաշվով 144 երեխաների տեղափոխումը : Նշված ժամանակահատվածի համար ըստ ծրագրի ՀՀ պետական բյուջեից մարզի համապատասխան ուսումնական հաստատություններին հատկացվել է 4.882.8 հազ. դրամ :

Մարզի հանրակրթական դպրոցների շենքային պայմանների բարելավման և նյութատեխնիկական բազայի արդիականացման նպատակով 2014 թ.վականի 1-ին կիսամյակի ընթացքում ավարտին է հասցվել Աշոցքի միջնակարգ դպրոցի շենքի կառուցումը, ընթանում են Անուշավանի միջնակարգ դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքները :

2014 թվականի 1-ին կիսամյակում միջազգային հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների և անհատ բարերարների կողմից որոշակի աջակցություն է ցուցաբերվել մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններին դպրոցական գույքի տեսքով, որի ընդհանուր արժեքը կազմել է 40.216.2 հազ. դրամ, որից Աշոցքի միջնակարգ նորակառույց դպրոցին՝ 32.774.7 հազ. դրամ, Բավրայի միջնակարգ դպրոցին՝ 6.417.2 հազ. դրամ, և մարզի բոլոր դպրոցներին սպորտային գույք՝ գնդակներ /1.024.3 հազ. դրամ/:

Հանրակրթության ոլորտի զարգացման կարևոր բաղադրիչներից է ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (S2S) ներդրումը և որակյալ ինտերնետային կապով համալրումը : Շարունակելով համագործակցությունը <<Dasaran.am>> կրթական ծրագրի հետ : 2014 թվականի 1-ին կիսամյակում ծրագրի շահառու դպրոցների ցանկը ընդլայնվեց՝ ընդգրկելով մարզի գյուղական համայնքների հանրակրթական ուսումնական հաստատությունները ևս : <<Dasaran.am>> ծրագիրը դպրոցներին և սովորողներին հնարավորություն է տալիս ժամանակակից չափանիշներին համապատասխան օն-լայն դաշտում իրականացնել միջդպրոցական և միջանձնային հաղորդակցություններ, փորձի և ձեռքբերումների փոխանակումներ:

4.1.3 Խնդիրներ

Կրթության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության հիմնական նպատակը կրթական ծառայությունների որակի և մատչելիության բարելավումն է՝ պետական հոգածությունն ուղղելով հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ընդգրկման ավելացմանը թե՛ նախադպրոցական և թե՛ հանրակրթության ավելի բարձր աստիճանի կրթության մեջ:

Համակարգի կարևոր խնդիրներից է կրթության առնաձևահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ուսումնական հաստատություններում համապատասխան պայմանների ստեղծումը: Չնայած ներառական կրթություն իրականացնող դպրոցների թվի տարեցտարի ավելացմանը, հանրակրթությունում խոցելի խմբերի աշակերտների համար հավասար հնարավորություններ ստեղծելու տեսանկյունից առաջնահերթ է նաև ներառական կրթության համակարգի զարգացումը, լիարժեք բովանդակությամբ ներառական կրթության կազմակերպումը:

Համակարգում առկա հիմնական խնդիրներից կարևոր են հեռավոր և սահմանամերձ գյուղական համայնքների դպրոցների մասնագետ մանկավարժներով համալրման հարցը, ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազայի, տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի թարմացումը : Դեռևս խնդիր է մնում շենքային պայմանների բարելավումը՝ հատկապես մարզադահլիճների անմխիթար վիճակը կամ դրանց բացակայությունը:

4.1.4 Քաղաձ դասերը և հետագա քայլերը

Հանրակրթության համակարգի գործունեությունն ուղղված է կրթության բովանդակային կատարելագործմանը: Սովորողների համար նախընտրելի հոսքային ուղղությունների, այդ թվում նաև

նախնական մասնագիտական կրթության ընտրությունը հնարավորություն կտա կրթական ծրագրերը դարձնել ճկուն՝ հնարավորություն ստեղծելով արձագանքել աշակերտների կրթական պահանջմունքներին և նախասիրություններին:

Նախադպրոցական կրթության խթանումը նպատակաուղղված է նախակրթարանները դարձնել ավելի մատչելի, ապահովել երեխաների համակողմանի զարգացումը, նրանց նախապատրաստել դպրոցին, իսկ ներառական կրթության հետագա ներդրումը հնարավորություն կընձեռի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ստեղծել ուսումնառության նպաստավոր պայմաններ:

Ոլորտի հետագա զարգացումը արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ օղակների՝ միջազգային, պետական, համայնքային և հասարակական կազմակերպությունների ակտիվ համագործակցությունը:

Անհրաժեշտ է առաջիկա տարիներին ևս շարունակել դպրոցների հիմնանորոգման, մարզադահլիճների և խաղահրապարակների կառուցման, տեխնիկական վերազինման ու գույքի թարմացման, նորագույն տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Մարզի կրթության ոլորտում 2014 թվականի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների արդյունքային ցուցանիշների ամփոփ պատկերը արտացոլված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

<i>Միջոցառման անվանումը</i>	<i>Արդյունքային ցուցանիշ</i>	<i>Թիրախ</i>	<i>Փաստացի</i>
-----------------------------	------------------------------	--------------	----------------

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

<p>Ոլորտային նպատակ՝ Բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը և որակը Շիրակի մարզում</p>	<p>1. Համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում -%</p> <p>2. Աշակերտ – ուսուցիչ հարաբերակցությունը՝ հանրակրթության բնագավառում</p> <p>3. Ջեռուցման կենտրոնացված համակարգ ունեցող դպրոցների թիվը -</p> <p>4. 3-6 տարեկան երեխաների նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածության տեսակարար կշիռը այդ տարիքի երեխաների ընդհանուր թվում-%</p> <p>5. Հանրակրթական ծառայությունների որակից աշակերտների և ծնողների բավարարվածության աստիճան -%</p> <p>6. ԲՈՒՀ ընդունված դպրոցի շրջանավարտների տեսակարար կշիռը տվյալ տարվա շրջանավարտների ընդհանուր թվաքանակի մեջ -%</p>	<p>99,1%</p> <p>11: 1</p> <p>79</p> <p>50 %</p> <p>80%</p> <p>-</p>	<p>99,1%</p> <p>8:1</p> <p>75</p> <p>40%</p> <p>80%</p> <p>-</p>
<p>1.Դպրոցների շենքային պայմանների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում</p>			
<p>1.1 Դպրոցական շենքերի կառուցում, վերանորոգում</p>	<p>Վերանորոգված դպրոցների թիվը-</p>	<p>8</p>	<p>2</p>
<p>1.2 Դպրոցների մարզադահլիճների և խաղահրապարակների վերանորոգում, մարզագույքով և տեխնիկական պարագաներով հագեցում</p>	<p>Բարելարգված մարզադահլիճներ և խաղահրապարակներ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը,- %</p>	<p>44.5 %</p>	<p>62 %</p>
<p>1.3 Ջեռուցման համակարգի արդիականացում</p>	<p>Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների տեսակարար կշիռ -%</p> <p>Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցներում սովորող աշակերտների թիվը-</p>	<p>65%</p> <p>մոտ.16750</p>	<p>68%</p> <p>մոտ.17000</p>
<p>1.4 Դպրոցական գույքի տրամադրում /ներառյալ 12-ամյա կրթությանը համապատասխան/</p>	<p>Նորացված գույք ունեցող դպրոցների թիվը</p>	<p>12</p>	<p>2 /Բավրան Աշոցք/</p>
<p>1.5 Լաբորատոր սարքավորումների և նյութերի, դիդակտիկ պարագաների ձեռքբերում, գրադարանային ֆոնդի համալրում և թարմացում</p>	<p>Համալրված և արդիականացված լաբորատորիաներ ունեցող դպրոցների թիվ</p> <p>Թարմացված գրադարաններ ունեցող դպրոցների թիվ</p>	<p>10</p> <p>5</p>	<p>2</p> <p>0</p>

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

1.6 Համակարգչային դասասենյակների ստեղծում, համալրում և ինտերնետ կապով ապահովում	Համակարգչային դասասենյակներ ունեցող դպրոցների թիվը - Մովորողների թիվը 1 համակարգչի հաշվով Ինտերնետային կապով ապահովված դպրոցների թիվը	153 20 153	148 19 153
1.7 Դպրոցական արհեստանոցների վերազինում /հաստոցներ, գործիքներ և նյութեր/	Վերազինված արհեստանոց ունեցող դպրոցների թիվը	5	4
1.8 Դպրոցական բուֆետ-ճաշարանների ստեղծում և համապատասխան գույքով ապահովում	Նոր բուֆետ-ճաշարաններ ունեցող դպրոցների թիվը	7	4
2. Ուսուցչական անձնակազմի որակավարման բարձրացում			
2.1 Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման դասընթացների պարբերաբար կազմակերպում, կրթության օրենսդրության մասին իրազեկում	Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ուսուցիչների թիվը-	1500	511
2.2 Ուսուցիչների համար համակարգչային դասընթացի կազմակերպում՝ դասապրոցեսում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման նպատակով	Համակարգչին տիրապետող ուսուցիչների թիվը -	1860	1860
2.3 Դասավանդման համագործակցային և մանկավարժական նոր մեթոդների ուսուցում	Վերապատրաստված ուսուցիչներ %	20%	18%
2.4 Ուսուցիչների պարտադիր ատեստավորման կազմակերպում	Ատեստավորված ուսուցիչների թիվը	800	0
3. Դպրոցների ինքնակառավարման կարողությունների բարձրացում			
3.1 Հանրակրթական դպրոցների ղեկավարների կառավարման հմտությունների զարգացում, այդ թվում արտաբյուջետային աղբյուրների ներգրավման կարողությունների:	Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ղեկավարների թիվը Արտաբյուջետային միջոցների տեսակարար կշիռը դպրոցների ընդհանուր բյուջեում %	150 0.5%	30 0

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

3.2 Դպրոցական խորհուրդների անդամների վերապատրաստում՝ խորհրդի աշխատանքների ակտիվացման և արդյունավետության բարձրացման նպատակով	Վերապատրաստման դասընթացների մասնակցած դպրոցական խորհրդի անդամների թիվը Դպրոցում իրականացվող ոչ պետական ծրագրերի /նախաձեռնությունների թիվը	9 -	8 1
3.3 Աշակերտական խորհուրդների ակտիվության բարձրացում՝ խորհրդի անդամների և դաստիարակության գծով տնօրենի տեղակալի, մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպչի վերապատրաստման միջոցով		-	-
4. Ներառական կրթության համակարգի զարգացում			
Հատուկ կրթության և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման նպաստավոր պայմանների ստեղծում	Կրթական հաստատություններում սովորող հատուկ կրթության և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների/աշակերտների թիվը-	171	236
5. Նախադպրոցական կրթության համակարգի զարգացում՝ հատկապես գյուղական համայնքներում			
5.1 Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավում	Վերանորոգված մանկապարտեզների թիվը	1	3
5.2 Նախադպրոցական հաստատությունների նյութատեխնիկական բազայի թարմացում և կրթական միջավայրի բարելավում	Թարմացված ուսումնական և նյութատեխնիկական բազա ունեցող մանկապարտեզների թիվ	54	43
5.3 Նախադպրոցական հաստատությունների կադրերի շարունակական վերապատրաստում	Վերապատրաստված դաստիարակների թիվ	50	62
5.4 Նախադպրոցական այլընտնաքային ծառայությունների մատուցում	3-6 տարեկան երեխաների նախադպրոցական հաստատություններում (հատկապես՝ հեռավոր և սահմանամերձ գյուղերի) ընդգրկվածության %	35%	25%

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. ՏԱՊ-ի կրթության ոլորտի 2014թ. առաջին կիսամյակի գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի փաստացի կատարված ծախսեր

	Մլն.դրամ			
Ոլորտը	2014թ.	2014թ.	Փաստացի	Կատարման

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

Ֆինանսավորման աղբյուրը	կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	նախատեսված իրատեսական բյուջեն	Ֆինանսավորման չափը 01.07.2014թ. դրությամբ	տոկոսը %
Կրթություն	425,6	274,0	156,1	
<i>որից՝</i>				
ՀՀ պետական բյուջե, այդ թվում	278,2	274,0	115,9	
սեփական միջոցներ				
վարկային միջոցներ				
միջ. կազմակերպություններ և դոնորներ	147,5	0	40,2	
համայնքային բյուջե				
մասնավոր ներդրողներ				
Այլ աղբյուրներ				

4.2. ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

4.2.1 Քաղաքականության վերլուծություն

ՀՀ Շիրակի մարզում պետական մշակութային քաղաքականությունը իրականացվում է Շիրակի մարզպետարանի կողմից՝ տարբեր ենթակայությունների հետևյալ կազմակերպությունների միջոցով. 6 թանգարանների, 97 գրադարանների, 24 երաժշտական և արվեստի դպրոցների, քոլեջների, վարժարանների, 3 նվագախմբերի, 47 մշակույթի տների և ակումբների, 13 երգչախմբերի, 1 դրամատիկական թատրոնի, 1 տիկնիկային թատրոնի, 3 գեղարվեստի դպրոցների, գեղարվեստական կրթության ԲՈՒՀ-երի 3 մասնաճյուղերի:

Մշակույթի ոլորտում ՀՀ Շիրակի մարզում ՀՀ Կառավարության կողմից իրականացվող համապետական ծրագրերը պայմանավորված են ՀՀ Կառավարության գործունեության միջոցառումների ծրագրով: ՀՀ մարզերում մշակույթի համաչափ զարգացման ապահովումը ՀՀ կառավարության որդեգրած մշակութային քաղաքականության մեջ կարևոր հիմնական ուղղություն է: 2014 թվականին իրականացվելիք ծրագրերը ընդհանուր առմամբ նպատակ ունեն բաձրացնելու մշակույթի դերը, պահպանելու ազգային մշակութային արժեքները:

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ - տնտեսական զարգացման ծրագրի 2014 թվականի տարեկան աշխատանքային պլանով Շիրակի մարզի մշակույթի ոլորտի առաջնային ռազմավարական նպատակներն են՝

Մշակույթի համակարգի գործունեության և կառավարման արդյունավետության զարգացումը, բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը, ոլորտի աշխատողների կարողությունների զարգացմանն ուղղված բարեփոխումների շարունակումը, մասնագիտական կրթության բնագավառում համապատասխան բարձր որակի ապահովումը:

Շիրակի մարզի մշակույթի ոլորտում 2014 թվականի ընթացքում կատարված աշխատանքները ուղղված են եղել մշակույթի պետական քաղաքականության գերակայությունների՝ մշակույթի պահպանման, տարածման և զարգացման հիմնական ուղղությունների իրականացմանը: Մշակույթի ոլորտում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են պետական մշակութային քաղաքականությունից բխող տարաբնույթ

միջոցառումներ՝ կապված ՀՀ ազգային և պետական տոների, հոբելյանական միջոցառումների արժևորման, հոգևոր և նյութական մշակութային ժառանգության պահպանման և զարգացման հետ: Կազմակերպված և անցկացված միջոցառումների ոչ ֆինանսական ցուցանիշը գերազանցել է նախատեսվածը:

4.2.2. Իրականացման առաջընթացը

Կազմակերպվել և համակարգվել է մարզային ենթակայության երկու թանգարանների, երկու համերգային կազմակերպությունների և մեկ արվեստի դպրոցի աշխատանքները:

Շարունակվել է արդյունավետ համագործակցությունը մարզում գործող տարբեր ենթակայությունների և իրավական նշանակության մշակութային հաստատությունների հետ:

Մշակվել և ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվել Շիրակի մարզի մշակութային կազմակերպությունների 2015-2017 թթ միջնաժամկետ ծախսային ծրագիրը, մարզի տաղանդավոր և շնորհալի երեխաների սվյալների բազան, տեղեկատվություն՝ Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսուցման վարձավճարի փոխհատուցմամբ ազգային, լարային և փողային նվագարանների դասարաններում սովորողների վերաբերյալ: Կազմվել և Շիրակի մարզի 2014-2017 թթ սոցիալ տնեսական զարգացման ծրագրում է ներառվել մշակույթի քառամյա զարգացման ծրագիրը:

Հստակեցվել և ՀՀ քաղաքաշինության նախարարություն է ներկայացվել կրթական, մշակութային և մարզական օբյեկտների առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման մասին տեղեկատվություն: ՀՀ մշակույթի նախարարության միջնորդությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարությանն է առաջարկվել Գյումրու «Ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ-ի մասնաճյուղ Ս. Մերկուրովի տուն-թանգարանի հիմնանորոգման (ներառյալ նախագծանախահաշվային) աշխատանքներն ընդգրկել 2014 թվականի Հայաստանի սոցիալական ներդրումների համայնքային ծրագրերում: Քննարկվել և ՀՀ մշակույթի նախարարությանն է ներկայացվել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Շիրակ և Արթիկ թեմերի եկեղեցիները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հանձնելու ենթակա եկեղեցիների ցանկը:

Հավաքագրվել և ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվել ՀՀ-ում և ԼՂ-ում տաղանդավոր պատանի երաժիշտ կատարողների զարգացման և կատարելագործման նպատակային ծրագրին ՀՀ Շիրակի մարզից մասնակիցների մասնակցության հայտերը:

ՀՀ պետական բյուջեից երաժշտական արվեստի դպրոցների ազգային, լարային և փողային բաժիններում սովորողների ուսման վարձավճարի փոխհատուցման պետական ծրագրի շրջանակներում կազմակերպվել է թվով 19 երաժշտական և արվեստի դպրոցների 377 սովորողների ուսման վարձավճարի փոխհատուցման գործընթացը:

Հունվար ամսին Գյումրու Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում անցկացվեց Հայոց բանակի ստեղծման 22-ամյակին նվիրված մշակութային միջոցառումը՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Փետրվար ամսին Գյումրու Մայր Հայաստան հուշահամալիրի տարածքում անցկացվեցին Գյումրու ձմեռ, Սուրբ Սարգիս մարզամշակութային միջոցառումները:

Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի սոցիալ կրթական կենտրոնին ցուցաբերվել է համապատասխան աջակցություն՝ Սուրբ զատկի տոնին նվիրված «1 զամբյուղ = ուրախ զատիկ» ակցիայի շրջանակներում:

Ապրիլի 7-ին կազմակերպվեց ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորված «Մայրության և գեղեցկության տոն» մշակութային միջոցառումը:

Ապրիլի 11-ին Գյումրիում բացվեց Երիաժիշտ կատարողների «Վերածնունդ» 6-րդ միջազգային մրցույթ փառատոնը:

Հովհաննես Շիրազի ծննդյան 100-ամյա հոբելյանի կապակցությամբ Գյումրիում անցկացվեցին մի շարք գրական-երաժշտական միջոցառումներ:

Ապրիլ ամսին կազմակերպվել է Կոմիտաս վարդապետի ծննդյան 145-ամյակին նվիրված «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական 7-րդ մրցույթ-փառատոնի Շիրակի մարզային փուլը և հաղթող երգչախմբերի մասնակցությունը փառատոնի հանրապետական փուլին:

2014 թ. մայիսի 17-ին «Թանգարանների գիշեր», իսկ մայիսի 18-ին՝ Թանգարանների միջազգային օրվա «Թանգարանները միավորում են մեզ» խորագրով միջոցառումների շրջանակներում Շիրակի մարզի թանգարաններում կազմակերպվեցին և անցկացվեցին տարաբնույթ միջոցառումներ:

Մայիսի 28-ին մարզի խոշոր համայնքներում կազմակերպվեցին տարաբնույթ միջոցառումներ՝ նվիրված առաջին Հանրապետության տոնին:

Տարվել են անհրաժեշտ աշխատանքներ՝ «Մշակութային կազմակերպություն-դպրոց» աբոնեմենտային համակարգի ներդրման պիլոտային ծրագրին մասնակցության շրջանակներում:

ՀՀ Շիրակի մարզպետի որոշմամբ ստեղծվեց ՀՀ Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդը:

Մարզի երաժշտական և արվեստի դպրոցներում անցկացվեցին տարեվերջյան հաշվետու համերգները, որը միտված է գեղարվեստական կրթության որակի գնահատմանը, նոր տաղանդների բացահայտմանը և մրցակցային դաշտի ապահովմանը:

Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործող Ամասիայի մանկական արվեստի դպրոց ՊՈԱԿ-ում կազմակերպվեց դպրոցի հիմնադրման 50-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառում:

ՀՀ ազգային ժողովի կողմից կազմակերպված «Փարաջանովի հետադարձ լույսը» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է ծրագրին մասնակից ստեղծագործող պատանիների այցելությունը Փարաջանովի թանգարան: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են սեմինար պարապմունքներ՝ մասնակիցների համար /ծրագիրը դեռևս ընթացիկ փուլում է/:

Նախապատրաստական փուլում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվելի Շիրակ-Ջավախք մշակութային միջոցառումը:

Տարվում են նախապատրաստական աշխատանքներ՝ «Անհայտ կորած ազատամարտիկի» հիշատակի օրվան նվիրված միջոցառման շրջանակներում:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

Ընթացքում են ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված «Իմ Հայաստան» և «ՀՀ պետական խորհրդանիշների օրվան նվիրված քայլերթ» հանրապետական միջոցառումներին մասնակցության հետ կապված նախապատրաստական աշխատանքները:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ 2014-2017ԹԹ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2014Թ. ՏԱՐԵԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ՄՇԱԿՈՒՑԹԻ ՈԼՈՐՏԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ**

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Պատասխանատու օղակ	Տեղեկատվություն կատարման վերաբերյալ
Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ	Թանգարանային գործունեության խթանում, մշակութային ժառանգության պահպանում	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Մարզպետարանի ենթակայության Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի և Շիրակի երկրագիտական թանգարանները օրենքով սահմանված կարգով իրականացրել են թանգարանային գործունեությունը
Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ	Համերգային գործունեության խթանում, երաժշտարվեստի զարգացում	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Գյումրու ժող. գործիքների և սիմֆոնիկ պետական նվագախմբերը իրականացրել են իրենց համերգային գործունեությունը
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային, փողային նվագարանների բաժիններում ուսուցում	Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության որակի ապահովում, նշված բաժիններում կրթության որակի բարձրացում	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Օրագրի շրջանակներում իրականացվել է նշված բաժիններում սովորողների ուսման վարձավճարների փոխհատուցման գործընթացը
2014 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի «Մշակութային միջոցառումների անցկացում» ծրագրի շրջանակներում թվով 7 միջոցառումների անցկացում	Ազգային, պետական, հոբելյանական տոների և միջոցառումների արժևորում, մշակութային բարիքների մատուցում	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են «Բանակի օր», «Մայրության և գեղեցկության տոն» մշակութային

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԶԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

			միջոցառումները
Տարաբնույթ մշակութային միջոցառումներ, փառատոներ կապված պետական և ազգային տոների, հիշարժան տարեթվերի և այլ մշակութային իրադարձությունների հետ	Մշակութային կյանքի աշխուժացում, մշակութային բարիքների մատուցում	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն համայնքներ, այլ կազմակերպություններ	Իրականացվել են պետական մշակութային քաղաքականություն ից բխող մի շարք մշակութային միջոցառումներ:
Մարզի գրադարանների, թանգարանների, մշակութային կրթական հաստատությունների, թատերահամերգային կազմակերպությունների և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ	Առանձին ոլորտների զարգացում	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն համայնքներ, այլ կազմակերպություններ	Մարզի գրադարանները և թանգարանները շարունակել են իրենց բնականոն գործունեությունը, ստեղծվել է ՀՀ Շիրակի մարզպետի առընթեր երիտասարդական խորհուրդ
Աջակցություն մարզային և հանրապետական փառատոների, տոնախմբությունների, հյուրախաղերի, կազմակերպմանը և անցկացմանը, ինչպես նաև միջազգային փառատոների մասնակցության ապահովում	Ստեղծագործական գործունեության խթանում, միջմշակութային փորձի փոխանակման աջակցում	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն համայնքներ, այլ կազմակերպություններ	Ապահովվել է Շիրակի մարզի պատանի և երիտասարդ ստեղծագործողների մասնակցությունը մի շարք հանրապետական փառատոների
Աջակցություն՝ գյուղական համայնքներում մշակույթի տների, ակումբների, կրթական հաստատությունների գործունեության նկատմամբ	Մշակութային կյանքի աշխուժացում, մշակութային գործունեության խթանում և մասսայականացում	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն համայնքներ, այլ կազմակերպություններ	Մարզի գյուղական համայնքներում մշակութային գործունեությունը իրականացվել է երաժշտական և արվեստի դպրոցների, մշակույթի տների և ակումբների միջոցով

4.3.ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏ

4.3.1.Քաղաքականության վերլուծություն

Շիրակի մարզը Հայաստանի Հանրապետության մարզական նվաճումներով աչքի ընկնող տարածաշրջաններից է: Հաշվետու ժամանակահատվածում մարզում գործել են տարբեր գերատեսչական ենթակայության 52 մարզական կազմակերպություններ,այդ թվում՝ 1 պետական մարզական քոլեջ, 37 մարզադպրոց,4 մարզական ակումբ, 2 համայնքային

կենտրոն և մարզական հասարակական կազմակերպությունների ու Հայաստանի շախմատի ակադեմիայի 8 մասնաճյուղ: Մարզի 3 քաղաքային և 18 գյուղական համայնքներում 25 մարզաձևերից և արևելյան մարտարվեստի տարատեսակներից գործող 980 ուսումնական խմբերում ընդգրկվել են շուրջ 11.000 մարզիկ-մարզուհիներ:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում մարզպետարանը հսկողություն է իրականացրել մարզում պետական ծրագրերի իրագործման ուղղությամբ, համադասել է մարզական կազմակերպությունների, հանրակրթական դպրոցների և մարզաձևերի զարգացման գործընթացը, աջակցել է հանրապետական առաջնություններին ու միջազգային մրցումներին համայնքների և մարզական կազմակերպությունների մարզիկների մասնակցությանը, ապահովել է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքային համապատասխան ստորաբաժանումների համատեղ գործունեությունը:

Ոլորտում իրականացված աշխատանքները նպատակաուղղվել են մարզի բնակչության շրջանում ֆիզիկական ակտիվության զարգացմանը և առողջ ապրելակերպի արմատավորմանը, համայնքներում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի աշխատանքների բարելավմանը, օլիմպիական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստմանը: Այդ իսկ նպատակով

կազմակերպվել և անցկացվել են ներքոհիշյալ միջոցառումները՝

- Ձմեռային մարզական-մշակութային տոնահանդեսներ՝ Գյումրիում, Ամասիայում և Մարալիկում,
- ՀՀ դպրոցականների 23-րդ մարզական խաղերի ծրագրով տարբեր մարզաձևերից տարածաշրջանային, մարզային և միջմարզային փուլերի մրցումներ,
- 1-6-րդ դասարանցիների շրջանում ՀՀ Ազգային Ժողովի գավաթի խաղարկության տարածաշրջանային ու մարզային փուլերի մրցումներ,
- <<Սպորտլադիա-2014>> միջոցառման համայնքային-տարածաշրջանային և մարզային փուլերի մրցումներ՝ մարզի նախադպրոցական հիմնարկների թիմերի միջև,
- <<Կոկա- Կոլայի գավաթ>> մանկապատանեկան ֆուտբոլի տարածաշրջանային ու մարզային մրցաշարեր,
- ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի տարածաշրջանային ու մարզային փուլերի մրցումներ,
- Հունահռոմեական ըմբշամարտից՝ <<Արամ Սարգսյանի գավաթի խաղարկում>> միջազգային մրցաշար,
- Միջազգային օլիմպիական կոմիտեի հիմնադրման օրվան նվիրված <<Օլիմպիական համաշխարհային օր>> մարզական տոնահանդես,
- Ռազմամարզական տարաբնույթ միջոցառումներ՝ հանրակրթական դպրոցներում,
- Տարբեր մարզաձևերից համայնքային ու մարզային առաջնություններ, գավաթի խաղարկություններ, բաց առաջնություններ և հուշամրցաշարեր:

4.3.2 Իրականացման առաջընթացը

Բովանդակություն	Ցուցանիշներ
Հսկողության սահմանում մարզում պետական	Անհրաժեշտ վերահսկողության է սահմանվել մարզում գործող տարբեր գերատեսչական

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

<p>ծրագրերի իրագործման, դպրոցներում և մարզադպրոցներում ուսումնամարզական աշխատանքները սահմանված պետական չափորոշիչներին համապատասխան կազմակերպելու ուղղությամբ</p>	<p>ենթակայության մարզադպրոցներում և հանրակրթական դպրոցներում ուսումնամարզական աշխատանքները սահմանված պետական չափորոշիչներին համապատասխան կազմակերպելու և իրականացնելու ուղղությամբ</p>
<p>Մարզական ու մարզական-զանգվածային միջոցառումների կազմակերպում</p>	<p>Կազմակերպվել և անց են կացվել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ կրթության և գիտության նախարարությունների կողմից ծրագրավորված միջոցառումների համայնքային-տարածաշրջանային և մարզային փուլերի մրցումները: Պլանավորվել և անց են կացվել տարբեր մարզաձևերից համայնքային ու մարզային առաջնություններ ,մրցաշարեր և տոնահանդեսներ:</p>
<p>Մարզական և մարզական-զանգվածային միջոցառումների միջմարզային և հանրապետական եզրափակիչ մրցումներին մարզի հավաքական թիմերի մասնակցության ապահովում</p>	<p>Ապահովվել է մարզի հավաքական թիմերի մասնակցությունը ՀՀ դպրոցականների 23-րդ մարզական խաղերի; շախմատի 8-րդ օլիմպիադայի, «Կոկա-կոլայի ֆուտբոլի գավաթ» և «Դիպուկ հրաձիգ» մրցաշարերի, ինչպես նաև տարբեր մարզաձևերից հանրապետության առաջնություններին ու հաշմանդամների 12-րդ մարզական խաղերին:</p>
<p>Ֆիզկուլտուրայի ուսուցիչների և մարզիչ-մանկավարժների համար վերապատրաստման ու որակավորման դասընթացների կազմակերպում</p>	<p>Դպրոցների ֆիզկուլտուրայի ուսուցիչները՝ Գյումրիում և մարզադպրոցների մարզիչ-մանկավարժները՝ Երևանում մասնակցել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ կրթության և գիտության նախարարությունների կողմից կազմակերպված վերապատրաստման ու որակավորման դասընթացներին:</p>
	<p>Մրցաշրջան 2014թ-ի 1-ին կիսամյակում, տարբեր տարիքային խմբերում հանդես եկող մարզի մարզիկների և թիմերի նվաճած մրցանակ-մեդալների քանակական ու որակական պատկերը հետևյալն է՝ 1.Աշխարհի և Եվրոպայի առաջնություններ.</p>

Մրցաշրջան 2014թ-ին Շիրակի մարզի մարզիկների և թիմերի ձեռքբերումները	<p>7 ոսկի - 6 արծաթ - 6 բրոնզ</p> <p>2. Եվրոպայի գավաթի և միջազգային „Ա,, կարգի մրցաշարեր՝ 6 ոսկի - 4 բրոնզ</p> <p>3. ՀՀ առաջնություններ.</p> <p>66 ոսկի - 56 արծաթ - 78 բրոնզ</p> <p>4. Հաշմանդամ մարզիկների 12-րդ հանրապետական մարզական խաղեր.</p> <p>3 ոսկի - 3 արծաթ - 3 բրոնզ</p> <p>5. Մարզական- զանգվածային հանրապետական միջոցառումներ.</p> <p>ա/ Դպրոցականների <<Դիպուկ հրաձիգ>> մրցաշար՝</p> <p>Վահրամաբերդի դպրոց - 2-րդ տեղ, Սառնաղբյուրի դպրոց - 3-րդ տեղ, բ/ <<Կոկա-կոլայի գավաթ>> ֆուտբոլի մանկապատանեկան մրցաշար.</p> <p>Նոր Կյանքի դպրոց - 1-ին տեղ, Գյումրու թիվ 27 դպրոց - 3-րդ տեղ</p>
--	---

4.3.3. Խնդիրները

- Մարզի համայնքներում մարզահրապարակների և խաղահրապարակների սակավությունը,
- Գյուղական և մասնավորապես սահմանամերձ և բարձր լեռնային գոտու համայնքներում սպորտով զբաղվելու անհրաժեշտ պայմանների և մարզագույքի բացակայությունը,
- Մարզական և մարզական-զանգվածային միջոցառումների կազմակերպման, հանրապետական եզրափակիչ փուլի մրցումներին մարզի հավաքական թիմերի մասնակցության ապահովման համար մարզպետարանին ՀՀ պետական բյուջեից համապատասխան ֆինանսական միջոցների չնախատեսումը:

4.3.4. Քաղաքացիները և հետազոտողները

Կազմակերպված մարզական ու մարզական-զանգվածային միջոցառումները զգալիորեն խթանել են մարզի բնակչության ակտիվ հանգստի կազմակերպմանն ու առողջության ամրապնդմանը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովմանը և տարբեր մարզաձևերի հավաքական թիմերը խոստումնալից, հեռանկարային պատանիներով ու աղջիկներով համալրմանը:

Առաջիկայի համար կարևորվում է բնակչության առողջ ապրելակերպի զարգացմանն ուղղված տարաբնույթ միջոցառումների կազմակերպումը, ուսումնական և մարզական հաստատություններում անհրաժեշտ ուսումնամարզական գործընթացի կազմակերպման համար համապատասխան պայմանների ստեղծումը:

4.3 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

4.3.1 Քաղաքականության վերլուծություն

Շիրակի մարզի առողջապահական համակարգում տեղի ունեցած լուրջ բարեփոխումները ուղղված էին գյուղական ամբուլատորիաների վերազինմանը և միջին բուժանձնակազմի վերապատրաստումներին:

Նոր քայլը՝ բժշկի աշխատավարձի ձևավորումը համավճարի ֆոնի վրա, ակնհայտորեն տվեց իր արդյունքը: Կոռուպցիոն ռիսկը առողջապահական համակարգում լրջորոն փոխեց, փոխելով և՛ պացիենտի, և՛ բժշկի մոտեցումը վերոնշյալ խնդրի նկատմամբ: Կիրառելով զանգվածային լրատվության միջոցները, հասարակության տեղեկացվածությունը, և բժշկի աշխատավարձի հաշվարկի նոր եղանակը մարզում կոռուպցիոն ռիսկը հասցվեց նվազագույնի:

4.3.2 Իրականացման առաջընթացը

Իր լրիվ հզորությամբ գործում է «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն՝ մարզի բնակչությանը մատուցելով որակյալ բժշկական օգնություն և սպասարկում: ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1572-Ն որոշումը «Գյումրու «Սամարիթեր» հիվանդանոց» ՓԲԸ-ն ՀՀ Շիրակի մարզպետի 03.04.2013թ. թիվ 80-Ա որոշմամբ վերանվանվեց «Սամարիթեր վերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ի: Համապատասխան լիցենզավորումից հետո արդեն ծավալվել է 15 մահճակալ հզորությամբ ստացիոնար վերականգնողական, վիրաբուժական և հեմոդիալիզի բաժանմունքներ՝ համապատասխան մասնագետներով և կահավորանքով: 2013թ.ի ընթացքում կազմակերպվեց «Հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի պարսպապատման և վերանորոգման աշխատանքները, ընթացքի մեջ է «Սարալիկի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի վերանորոգման, «Անի Պեմզայի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի արտաքին ջրագծի անցկացման, արտաքին գազամատակարարման և ներքին ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքները:

Հաշվի առնելով մարզի բուժաշխատողների սոցիալական անապահով վիճակը Կազմակերպվել է ընտանեկան, թերապևտիկ, մանկական, կաբինետային, շտապ բուժօգնության կայանի բուժքույրերի վերապատրաստման դասընթացներ Շիրակի մարզում ՀՀ առողջապահության նախարարության ազգային ինստիտուտի կողմից:

4.3.3 Խնդիրները

Մարզում շարունակում է խնդրահարույց մնալ «Ախուրյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների արմատական բարեփոխման վաղուց հասունացած հարցը, ինչպես նաև Գյումրի քաղաքի «Թիվ 1 պոլիկլինիկա», «Թիվ 2 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունների շենքերի վերանորոգման հարցը: Բժշկական սարքավորումներով հագեցվածության հարցը հատկապես «Թիվ 1 պոլիկլինիկա», «Թիվ 2 պոլիկլինիկա», «Կարմիր խաչի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերություններում բուժասարքավորումները կամ բացակայում է, կամ՝ առկա են այնպիսի սարքավորումներ, վաղուց սպառել են իրենց: Մարզի ծայրամասերում լուրջ խնդիր է 6-7 ամիս ձմեռային պայմաններում հիմնական կապող ճանապարհների դժվարանցանելիությունը, որը խոչընդոտում է առողջապահական հիմնարկների առաջնային բուժօգնության կազմակերպմանը:

Մարզում առողջապահության բնագավառի առաջնահերթ խնդիրներից է ախտաբանաանատոմիական լաբորատորիայի կառուցումը: Այս խնդիրը լուծման փուլում է:

4.3.4 Քաղած դասերը եվ հետագա քայլերը

Իրական իրավիճակի վերլուծությունը հուշում է առաջիկայում մարզի առողջապահական համակարգի զարգացման ուղղությունները: Մարզի ծայրամասերում, հատկապես 6-7 ամիս ձմեռային պայմաններում հիմնական կապող ճանապարհները մշտապես դժվարանցանելի են, որը

խոչընդոտում է առողջապահական հիմնարկների առաջնային բուժօգնության կազմակերպմանը: Անհրաժեշտ է հազեցնել առողջության առաջնային պահպանման բուժհիմնարկները /ամբուլատոր-պոլիկլինիկաներ/ ժամանակակից սարքավորումներով, որը մարզի առողջապահական համակարգի համար դառնալու է զարգացման գերակա ուղղություն:

Մարզի առաջնային բուժօգնության զարգացումը կխթանի դիմող հիվանդների վաղ ախտորոշվելուն, ամբուլատոր բուժօգնության ծավալների ավելացմանը, որը կկրճատի ստացիոնար պայմաններում բուժվող հիվանդների քանակը և կնպաստի մարզի առողջապահության համակարգի ֆինանսական միջոցների խնայողությանը:

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. առողջապահության ոլորտի 2014թ. առաջին կիսամյակի գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի փաստացի կատարված ծախսեր

Մլն.դրամ

Ոլորտը /ֆինանսավորման աղբյուրը	2014թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014թ. նախատեսվածի րատեսական բյուջեն	Փաստացի ֆինանսավորման չափը 01.07.2014թ. դրությամբ	Կատարման տոկոսը %
Առողջապահություն	72,8	93	58,7	46,1
<i>որից՝</i>				
ՀՀ պետական բյուջե, այդ թվում	72,8	93	42,8	
սեփական միջոցներ				
վարկային միջոցներ				
միջ. կազմակերպություններ և դոնորներ				
համայնքային բյուջե				
մասնավոր ներդրողներ				
Այլ աղբյուրներ			15,8	

4.4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

4.4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

4.4.1 Քաղաքականության վերլուծություն

Սոցիալական պաշտպանության ոլորտում մարզի զարգացման գերակա նպատակ է համարվում սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացումը: Այն կարող է իրագործվել սոցիալական ծրագրերի բնակչության իրազեկության բարձրացման, սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության միջոցառումների ընդլայնման, սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման, սոցիալական ծառայություններ տրամադրող մարմինների նյութատեխնիկական բազայի բարելավման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավման միջոցով:

Ընտանեկան նպաստների, կենսաթոշակային ապահովության համակարգերի հետագա բարելավման և կատարելագործման /բազմաստիճան կենսաթոշակային համակարգի՝ այդ թվում նոր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրում/, ինչպես նաև միանվագ դրամական օգնությունների

չափերի բարձրացմանն ուղղված միջոցառումները կշարունակվեն հնարավորինս ապահովելով մարզի բնակչության սոցիալական վիճակը:

ՀՀ Շիրակի մարզի համար սոցիալական պաշտպանության բնագավառում կարևորվում է բնակչության սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների ընդլայնումը: Այդպիսի ծառայություններից են.

- Սոցիալական ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովման նպատակով մարզում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ամբողջական և լիարժեք ներդրում՝ սոցիալական համալիր ծառայությունների տրամադրում <<Մեկ պատուհան>> սկզբունքով:

- Հաշմանդամներին /հատկապես հաշմանդամ երեխաներին /վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովումը, ինչպես նաև նրանց հասարակության մեջ ինտեգրելու ծրագրերի իրականացումը:

- Խնամքի կարիք ունեցող միայնակ տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց համար արժանապատիվ կենսապայմանների ապահովումը, նրանց կյանքի որակի բարելավումը, խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների ներդրումը ինչպես նաև զբաղվածության խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվող միջոցառումները:

- Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի զարգացմանը, երեխաների սոցիալական պաշտպանությանը, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանությանն ու հասարակության մեջ նրանց ինտեգրմանն ուղղված ծրագրերի իրականացումը, այդ թվում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների ընդլայնումը:

- Մարզում բնակարանի կարիք ունեցող փախստական ընտանիքներին բնակարանով ապահովելու խնդիրը:

- ԽՍՀՄ խնայբանկում մինչև 1993թ. ներդրված ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման շարունակական ծրագրերը:

- Սոցիալական և այլ իրավունքների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների զարգացումը:

4.4.2 Իրականացման առաջընթացը

Սոցիալական ծառայությունների հասցեականության ու մատչելիության, որակի բարձրացմանն ուղղված 2014 թվականի տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումները ընթացքի մեջ են: 2014 թվականի առաջին կիսամյակում ՀՀ Շիրակի մարզպետի կողմից ապահովվել է սոցիալական ապահովության ոլորտի իրավական ակտերով մարզպետին վերապահված գործառույթների իրականացումը, համագործակցելով ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, այլ հանրապետական

գործադիր մարմինների, ՏԻՄ-երի և ՀԲԿ-ների հետ: Որոշակի աշխատանքներ են իրականացվել սոցիալական աջակցության պետական, մարզային ծրագրերի իրականացման և համակարգման, մարզում սոցիալական աջակցության ծրագրեր իրականացնելիս սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններին աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ:

Պարբերաբար իրականացվել են հարակից բազաներից ստացվող տեղեկատվությունների և տեղական տեղեկատվական բազաների համադրման, մասնագետների տնային այցելությունների միջոցով ընտանիքների սոցիալական վիճակի ուսումնասիրությունների գործառնությունները, որոնք որոշակիորեն նպաստել են ընտանեկան նպաստների հասցեկանության բարձրացմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ Շիրակի մարզում անապահովության գնահատման համակարգում հաշվառված են թվով 18674 ընտանիք, որից 15264-ը նպաստառուներ են: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նպաստառու ընտանիքների թիվը աճել է 234 ընտանիքով: ՄՕՏ մարմինների կողմից հրատապ դրամական օգնություն է տրվել 1260 ընտանիքի: ՀՀ Շիրակի մարզպետի որոշումներով «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով Հայրենական Մեծ պատերազմի վետերանների, Արցախյան պատերազմի ժամանակ զոհված ազատամարտիկների ընտանիքների, բազմազավակ ընտանիքների և սոցիալապես կարիքավոր ընդհանուր թվով 561 քաղաքացիների ցուցաբերվել է 9.0 մլն դրամի ֆինանսական օգնություն:

Կազմակերպվել են քաղաքացիներից ստացվող առաջարկությունների, դիմում- բողոքների ուսումնասիրություններ, իրականացվել դրանց լուծմանն ուղղված աշխատանքներ: Հաշվետու շրջանում ստացվել և սահմանված կարգով ընթացք է տրվել թվով 685 գրավոր և բանավոր դիմում-բողոքների, որից 615-ը դիմել են գրավոր:

Մարզում սոցիալապես անապահով ընտանիքների անդամներ /թվով 295 մարդ/ ընդգրկված են սննդապահովման հումանիտար ճաշարաններում:

Ցերեկային խնամքի կենտրոններում և տնային պայմաններում խնամքի ծառայություններ են իրականացվել 420 ծերերի համար: Վերականգնողական և օժանդակ տեխնիկական այլ պարագաներ են ստացել թվով 202 հաշմանդամներ, այդ թվում` 20 հաշմանդամ երեխաներ::

Ընթացքի մեջ է <<Կարիտաս Ավստրիա>> միջազգային բարեսիրական հասարակական կազմակերպության հովանավորությամբ Գյումրի քաղաքում բազմակի հաշմանդանություն ունեցող քաղաքացիների ցերեկային հոգածության կենտրոնի կառուցման աշխատանքները :

Որոշակի աշխատանքներ են իրականացվել մարզի բնակչության զբաղվածության և գործազուրկների հաշվառման ուղղությամբ տարածքային կենտրոնների գործունեությանը աջակցելու, նոր աշխատատեղերի ստեղծմանն ուղղված ձեռնարկումներին նպաստելու ուղղությամբ: 01.06.2014թ. դրությամբ մարզի կտրվածքով աշխատանքի են տեղավորվել թվով 416 գործազուրկներ, որոնցից 250-ը` կանայք են: Գյումրիում աշխատանքի տեղավորվածների թիվը կազմում է 376 մարդ,

որից 221-ը՝ կանայք են: Գրանցված գործազուրկների ընդհանուր թիվը կազմել է 8763 մարդ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 655 մարդով:

Նշված ժամանակահատվածում գիշերային խնամքի հաստատություններից և մանկատանից ընտանիք է վերադարձել 11 երեխա: Երեխաների մուտքը խնամքի հաստատություններ կանխարգելելու նպատակով 19 երեխայով ավելացել է ցերեկային կենտրոններ հաճախող երեխաների թիվը:

Գյումրիի թիվ 2 գիշերօթիկ հաստատությանում բացվել է սպորտային դահլիճ և կահավորվել սպորտային գույքով: Գյումրիի «Թոչուկյան տուն» գիշերօթիկ հաստատությունում բացվել է մարզահրապարակ:

Մարզում գործող 9 ներառական դպրոցներին ավելացել է ևս 1 դպրոց /Գյումրիի թիվ 15 հիմնական դպրոց/: Կիսամյակում վկայագրվել է 139 աշակերտի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը /ընդհանուր թիվը 871/:

Հոգեբանավերականգնողական աշխատանքներ են տարվել վարքային շեղումներ ունեցող 6 անչափահասի և նրանց ծնողների հետ:

Ընթացքի մեջ է նախկին ԽՍՀՄ խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման գործընթացը:

Հաշվետու շրջանում կարևորվել է մարզում իրականացվող սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացումը, պետական նպաստների համակարգի, հաշմանդամների հիմնախնդիրների, սոցիալական պաշտպանության ոլորտի այլ իրավական ակտերի լուսաբանումը:

4.4.3 Խնդիրները

Կադրերի մասնագիտական պատրաստվածության աստիճանը շարունակվում է հանդիսանալ սոցիալական ծրագրերի իրականացման արդյունավետության վրա ազդող հիմնական գործոն: Առաջիկայում ևս կարևորվում է պետական և ոչ պետական սոցիալական ծառայությունների մասնագետների կարիքների գնահատման հմտությունների զարգացումը, խնամողների վերապատրաստումը, հաշմանդամներին, ծերերին խնամելու, այդ թվում՝ տան պայմաններում խնամք կազմակերպելու համար:

Համայնքներում սոցիալական ծրագրեր իրականացնելիս բավարար մակարդակի վրա չէ համագործակցությունն ու սոցիալական գործընկերությունը տեղական ինքնակառավարման, սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների և սոցիալական ոլորտի հասարակական կազմակերպությունների միջև:

4.4.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Սոցիալական ծառայությունների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է բարելավել նաև այդ կենտրոնների նյութատեխնիկական բազան:

Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավումը դարձել է անհրաժեշտ օրակարգային խնդիր, որի լուծման կարևոր և հիմնական միջոց կդառնա մարզում ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման հայեցակարգային մոդելի ներդրումը: Սոցիալական ծառայությունների մատուցման որակը բարձրացնելու նպատակով ներկայումս Աշոցքում և Մարալիկում գործում են սոցիալական ծառայություններ մատուցող պետական կազմակերպությունների համալիր կենտրոնները:

Հետագայում ևս կարևորվում է սոցիալական ծառայությունների կառավարման, հասցեականության, մատչելիության և որակի բարձրացման ուղղված աշխատանքների իրականացումը:

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. ՏԱՊ-ի Սոցիալական ապահովություն ոլորտի 2014թ. առաջին կիսամյակի գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի փաստացի կատարված ծախսեր

հազ դրամ

Ոլորտը /Ֆինանսավորման աղբյուրը	2014թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014թ. նախատեսված իր ատեսական բյուջեն	Փաստացի ֆինանսավորման չափը 01.07.2014թ. դրությամբ	Կատարման տոկոսը %
Սոցիալական ապահովություն	1080.0	1080.0	374.0	34.6
<i>որից՝</i>				
ՀՀ պետական բյուջե, այդ թվում	20.0	20.0	9.0	45.0
սեփական միջոցներ				
վարկային միջոցներ				
միջ. կազմակերպություններ և դոնորներ				
համայնքային բյուջե				
մասնավոր ներդրողներ	1060.0	1060.0	365.0	34.4
Այլ աղբյուրներ				

5.ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆ

5.1 Քաղաքականության վերլուծություն

ՀՀ Շիրակի մարզում 2014թ. ՄԶԾ կարևորագույն նպատակներից է գյուղատնտեսության գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման և կատարելագործման միջոցով ավելացնել բուսաբուծական և անասնապահական մթերքների ծավալները, բարձրացնել արտադրության արդյունավետությունը, լուծել իրացման խնդիրները, որի արդյունքում կավելանա գյուղացիական տնտեսությունների եկամուտները և կկրճատվի աղքատությունը գյուղական բնակավայրերում:

Գյուղատնտեսության բնագավառում նախատեսվող կարևոր միջոցառումների ընդհանուր գումարը 2014թ. կազմել է մոտ 2830.670 մլն դրամ, որտեղ ներդրումներ են նախատեսված ինչպես պետական բյուջեի, այնպես էլ միջազգային և այլ դոնոր կազմակերպությունների միջոցներով:

2014թ. ընթացքում միջոցառումները հիմնականում ուղղվել են ֆերմերային և գյուղացիական տնտեսությունների հացահատիկային կուլտուրաների սերմարտադրության, սորտաթարմացման, ռոտզման ցանցերի ընդլայնման, արտավայրերի ջրարբիացման և բարելավման բնագավառներում անասնապահության և դաշտավարության զարգացման ծրագրերում աջակցելու գործընթացներին.

1. Այլ աղբյուրների և խոշոր ֆերմերների կողմից մարզ է ներկրվել կարտոֆիլի բարձր վերարտադրության տնկանյութ, գումարը կազմել է 200 մլն դրամ:
2. Մարզ են ներկրվել թունաքիմիկատներ և բուժանյութեր 1.184 մլն դրամ արժողությամբ:
3. «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում մարզի Ծաղկուտ համայնքին հատկացվել է գյուղատնտեսական տեխնիկա, ընդհանուր գումարը կազմել է 15 մլն դրամ:
4. ՀՀ կառավարության կողմից պետ. բյուջեի միջոցներով սուբսիդավորվել են մարզում գյուղատնտեսական ոլորտին տրամադրվող վարկեր՝ շուրջ 37.6 մլն դրամ :
5. ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը Համաշխարհային բանկի հետ համատեղ 2014թ. ընթացքում «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային նոր ծրագրի շրջանակներում Շիրակի մարզում իրականացնել հետևյալ աշխատանքը /ընդհանուր արժեքը 139.2 մլն դրամ/
 - Արևշատ – 10000 գծամետր խողովակաշարի տեղադրում և 2 խմոցի կառուցում
6. «ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրի շրջանակներում մարզին հատկացվել է 5630.9 տ ազոտական պարարտանյութ, որի գումարը կազմում է 675.708 մլն դրամ, պետության կողմից սուբսիդավորման գումարը՝ 225.236 մլն դրամ:
7. ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վեռալանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրի շրջանակներում մարզին հատկացվել է 4406600 լիտր դիզելային վառելանյութ, որի գումարը կազմում է 1542.310 մլն դրամ, պետության կողմից սուբսիդավորման գումարը՝ 462.693 մլն դրամ:

Միջոցառման անվանումը	Պլանավորված /մլն դրամ/		Ծանոթություն
	2014թ. տարեկան նախատեսված	2014թ. ընթացքում փաստացի կատարված	

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

Մարզի հողօգտագործողներին մատչելի գներով ազդեցական պարարտանյութի ձեռք բերում / տարեկան 4500-5500 տ /	225236.0	120000.0	ՀՀ պետ. բյուջե
Մարզի հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռք բերում / տարեկան 5մլն լ /	462693.0	168630.0	ՀՀ պետ. բյուջե
Գարնանացան գարու, կորնզանի, առվույտի և եգիպտացորենի բարձր վերարտադրության սերմերի ներկրում /տարեկան 300 տ գարնանացան գարի, 150 տ կորնզան, 20 տ առվույտ և 2 տ եգիպտացորեն/	121941.0	20000.0	ՀՀ պետ. բյուջե
Աշնանացան ցորենի բարձր վերարտադրության սերմացուի ներկրում /տարեկան 200 տ/	150000.0	0.0	ՀՀ պետ. բյուջե
Հակակարկտային կայանքների տեղադրում /տարեկան 5-10 հատ/	60000.0	20000.0	ՀՀ պետ. բյուջե, այլ աղբյուր
Գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ձեռք բերում լիզինգային պայմաններում /տարեկան 5 տրակտոր, 3 հացահատիկհավաք կոմբայն և այլ սարքավորումներ/	100000.0	45000.0	Այլ աղբյուր
Կարտոֆիլի բարձր վերարտադրության տնկանյութի ներկրում /տարեկան 200 տ/	640000.0	200000.0	Այլ աղբյուր
Թունանյութերի և բուժանյութերի ձեռք բերում	30000.0	30000.0	ՀՀ պետ. բյուջե, այլ աղբյուր
Մարզի վարելահողերի մշակման համար սուբսիդիայի հատկացում	0.0	0.0	ՀՀ պետ. բյուջե
Կապսի ջրամբարի կառուցում	0.0	0.0	ՀՀ պետ. բյուջե
Արթիկի ջրամբարի կառուցում	0.0	0.0	ՀՀ պետ. բյուջե
Շիրակի մայր ջրանցքի վերանորոգում /տարեկան 1000-1500 մ/	23000.0	7000.0	ՀՀ պետ. բյուջե
Պոմպակայանների և խորքային հորերի սարքավորումների կապիտալ վերանորոգում և պոմպային ու պամպակայանի կամ խորքային հորերի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերում	1000.0	1000.0	Այլ աղբյուր
Միջտնտեսային, ներտնտեսային և ջրհան կայանների մղման խողովակաշարերի, հեռացնող ու մոտեցնող ջրանցքների կապիտալ վերանորոգում	0.0	0.0	ՀՀ պետ. բյուջե

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

Մեխանիկական ոռոգումից ինքնահոս ոռոգման անցում կատարելու համար կապիտալ ծախսեր	0.0	0.0	ՀՀ պետ. բյուջե
Այգաբացի ջրանցքի վերանորոգում	0.0	0.0	ՀՀ պետ. բյուջե
Արթիկի ջրհան կայանի մղման խողովակաշարի վերանորոգում	0.0	0.0	ՀՀ պետ. բյուջե
Կամո և Նոր Կյանք պոմպակայանների վերանորոգում	0.0	0.0	ՀՀ պետ. բյուջե
Արթիկի ջրհան կայանի հեռացնող ջրանցքի վերանորոգում	0.0	0.0	ՀՀ պետ. բյուջե
Սառնաղբյուրի ջրհան կայանի վերանորոգում	0.0	0.0	ՀՀ պետ. բյուջե
Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում	20000.0	10000.0	ՀՀ պետ. բյուջե
Համայնքներում անասնաբուժական սպասարկում իրականացնող անասնաբուժերի վարձատրություն	71000.0	71000.0	ՀՀ պետ. բյուջե
Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութերի փորձաքնության միջոցառումների իրականացում	15000.0	7500.0	ՀՀ պետ. բյուջե
Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության ծրագրի շրջանակներում ՀՀ Շիրակի մարզի 20 համայնքներում իրականացնել արոտների ջրարբիացում	660000.0	124200.0	ՀՀ պետ. բյուջե
Տոհմային երինջների ներկրում /տարեկան 50-70 գլուխ/	100000.0	0.0	Այլ աղբյուր
Կաթի ընդունման և մշակման փոքր արտադրամասերի հիմնում /տարեկան 2 հատ/	0.0	0.0	ՀՀ պետ. բյուջե
Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորում	30000.0	15000.0	ՀՀ պետ. բյուջե
Մարզի հողօգտագործողներին մատչելի գներով ֆոսֆորական կալիումական պարարտանյութերի ձեռք բերում	90800.0	12000.0	ՀՀ պետ. բյուջե

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

Գյուղատնտեսական ոլորտին տրամադրվող վարկերի սուբսիդավորում	30000.0	37600.0	ՀՀ պետ. բյուջե
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 2014թ. 1-ին կիսամյակ	2830670.0	888930.0	

5.2 Իրականացման առաջընթացը

2014թ. ընթացքում գյուղատնտեսության ոլորտում իրականացվել են 888 մլն 930 հազ. դրամի ծրագրեր՝ ՀՀ պետական բյուջեի և միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից:

Պետական բյուջեի շրջանակներում կատարվել է 107097 գլուխ խոշոր, 90400 գլուխ մանր եղջերավոր անասունների, 13810 գլուխ խոզերի, 17500 փեթակ մեղուների հակահամաճարակների դեմ պատվաստումներ:

Մարզում զգալիորեն բարելավվել են խորհրդատվական աշխատանքները: Տարբեր դոնորների հետ ֆինանսական աջակցությամբ ուսուցումներ և խորհրդատվական աշխատանքներ են կազմակերպվել մարզպետարանի, ԳԱՄԿ-ի, ՓՄՁ-ԶԱԿ-ի և հասարակական կազմակերպությունների կողմից:

Աղյուսակ. Գյուղատնտեսության ոլորտի արդյունքային ցուցանիշները.

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ /տարեկան պլան/	2014թ. արդյունքը /առաջին կիսամյակ/
Արդյունք 1. Մարզի հողային և մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործում:	1.1 Օգտագործվող վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի մակերեսը 1.2 Չօգտագործվող վարելահողերի տարածքը 1.3 Ոռոգելի մշակաբույսերի ցանքատարածությունների մակերեսը 1.4 Գյուղատնտեսության ոլորտում զբաղված աշխատուժի տեսակարար կշիռը	121381.2հա 16000 հա 20104.6 հա 21 %	121381.2հա 16000 հա 20104.6 հա 21 %
Արդյունք 2. Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և համախառն արտադրանքի ծավալների բարձրացում	2.1 Կարտոֆիլի համախառն արտադրանքը 2.2 Կարտոֆիլի բերքատվությունը 2.3 Հացահատիկի համախառն արտադրությունը 2.4. Հացահատիկի միջին բերքատվությունը	110 հազ.տոննա 250 g/հա 135.0 հազ.տոննա 30.0 g/հա	0 հազ. տոննա 0 g/հա 0 հազ. տոննա 0 g/հա

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

Արդյունք 3. Ոռոգման համակարգի քարտեզավում	3.1 Ոռոգվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը 3.2 Մարզում վերականգնված ոռոգման ցանցերի ընդհանուր երկարությունը`	15084հա 0.038 կմ	15084հա 0.038 կմ
Արդյունք 4. Գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ավելացում, որակի քարտեզավում և հիվանդությունների կանխում	4.1 Կաթի արտադրության ծավալները 4.2 Մսի արտադրության ծավալները 4.3 Կաթի իրացման ծավալները 4.4 Մսի իրացման ծավալները 4.5 Բրդի իրացման ծավալները 4.6 Չվի իրացման ծավալները, 4.7 Արհեստականորեն սերմնավորված խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը 4.8 Համաճարակների դեմ պատվաստված անասնագլխաքանակը վերաձած խոշորի	115.0 հազ.տոննա 21.0 հազ.տոննա 105.0 հազ. տոննա 21.0 հազ. տոննա 230 տոննա 40.0 մլն հատ 2000 գլուխ 105000 գլուխ	72.0 հազ.տոննա 5.1 հազ.տոննա 65.0 հազ. տոննա 5.1 հազ.տոննա 230 տոննա 26.1 մլն հատ 1500 գլուխ 105000 գլուխ
Արդյունք 5. Գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների քարտեզավում	5.1 Մեծածախ առևտրում ընդգրկված ֆերմերների քանակը 5.2 Սառնարանների տարողունակությունը, 50տ. և 236խոր.մ /ընդամենը` 2 սառնարան/ 5.3 Գործարկված կաթի ընդունման և նախնական վերամշակման կետերի տարողունակությունը, /ընդամենը` 8 կաթի կետ/ 5.4 Փոքր սպանդանոցների տարողունակությունը, 150խոր.մ /ընդամենը` 1 արտոնագրված սպանդանոց/ 5.5 Ոռոգվող հողերի մակերեսը 5.6 Հիմնանորոգված անասնաբուժական լաբորատորիաների թիվը	960 ֆերմեր 50տ -236խոր.մ 8 կաթի կետ 150խոր.մ 20104.6 հա 0	960 ֆերմեր 50տ -236խոր.մ 8 կաթի կետ 150խոր.մ 20104.6 հա 0

5.3 Խնդիրները

Ոլորտում մարզի առաջնահերթ խնդիրներն են.

- 1) Գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության ցածր մակարդակը
- 2) Վերամշակող արտադրամասերի ստեղծումը
- 3) Մարզում սպանդանոցի և տոհմային անասնաբուժական կենտրոնի հիմնումը
- 4) Մարզի համայնքներում հակակարկտային համակարգերի ընդլայնումը

5.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Հետագա տարիներին պետք է հետևողականորեն շարունակվեն վերոնշյալ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ֆերմերային և գյուղացիական տնտեսությունների

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

կերարտադրության, արհեստական սերմնավորման, կաթնարտադրության խթանման, հացահատիկային կուլտուրաների սերմարտադրության, սորտաթարմացման բնագավառներին, անասնապահության և դաշտավարության զարգացմանն աջակցելու գործընթացները:

Աշխատանքներ են իրականացվում լիզինգային տարբերակով համայնքներում մեքենատրակտորային պարկերի ստեղծման և անհատ գյուղացիական տնտեսություններին գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրման ուղղությամբ: Առաջարկություններ են ներկայացվել շահագրգիռ ներդրող կազմակերպություններին մարզում վերամշակող արտադրամասեր ստեղծելու ուղղությամբ:

Գյուղատնտեսությունում տեղի ունեցող տարերային աղետների հետևանքները վերացնելու նպատակով աշխատանքներ են տարվում մարզում հակակարկտային ծառայությունները ընդլայնելու ուղղությամբ:

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. ՏԱՊ-ի գյուղատնտեսության ոլորտի 2014թ. առաջին կիսամյակի գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի փաստացի կատարված ծախսեր

Մլն.դրամ

Ոլորտը /ֆինանսավորման աղբյուրը	2014թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014թ. նախատեսվածի ատեսական բյուջեն	Փաստացի ֆինանսավորման չափը 01.07.2014թ. դրությամբ	Կատարման տոկոսը %
Գյուղատնտեսություն				
<i>որից՝</i>				
ՀՀ պետական բյուջե, այդ թվում				
սեփական միջոցներ				
վարկային միջոցներ				
միջ. կազմակերպություններ և դոնորներ				
համայնքային բյուջե				
մասնավոր ներդրողներ				
Այլ աղբյուրներ				

6. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

6.1. Քաղաքականության վերլուծություն

Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի բնապահպանական ոլորտի քաղաքականությունը մշակվել է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ազգային ծրագրի դրույթները եւ գերակայությունները, համաձայն որի 2014 թվականին նախատեսվել էր աշխատանքներ իրականացնել հետեւյալ ոլորտներում.

- 1/ Շիրակի մարզի անտառների վերականգնում և շուրջ 200 հա նոր անտառների հիմնում,
- 2/ Արոտավայրերի և խոտհարքների արդյունավետության բարձրացում, ջրաբխացման համակարգերի ստեղծում,
- 3/ «Արփի լիճ» ազգային պարկի բուֆերային գոտում ընդգրկված համայնքներում սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերի իրականացում:

Շիրակի մարզի հյուսիս-արեւմուտքում «Արփի լիճ» ազգային պարկի ստեղծման ծրագրի շրջանակներում 2014թ. նախատեսված ներդրումային ծրագրերի ուղղությամբ, որոնք ուղղված էին պահպանման գոտու բոլոր 14 համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, հաշվետու կիսամյակի ընթացքում հատկացվել է 34.7 մլն դրամ գումար:

2014թ. առաջին կիսամյակի ընթացքում որոշակի աշխատանքներ են իրականացվել նաև արոտավայրերի բարելավման և արդյունավետ կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ:

6.2. 2014թ. միջոցառումների իրականացման ընթացքը.

<<ՀՀ Շիրակի մարզի անտառների վերականգնման համալիր ծրագրերի>> շրջանակներում մարզում նոր անտառազանգված ստեղծելու, այն ցանկապատելու և խնամքի աշխատանքներ կատարելու նպատակով չնայած նախատեսվել էր շուրջ 60.0 մլն դրամ, սակայն այդ ծրագրով 2014թ. առաջին կիսամյակի ընթացքում ֆինանսական հատկացումներ դեռևս չեն կատարվել:

Հեռագնա արոտներում ջրաբքիացման համակարգերի ստեղծում ծրագրով Շիրակի մարզի Սարալանջ, Նահապետավան, Արևշատ, Ծաղկուտ համայնքների համար նախատեսված 180.0 մլն դրամից 2014թ. առաջին կիսամյակի ընթացքում հատկացվել է 124.0 մլն դրամը, որի հաշվին իրականացվել են ջրաբքիացման համակարգերի կառուցման, անասունների համար խմոցների տեղադրման աշխատանքներ:

Հայաստանի անտառների վերականգնման հիմնադրամի միջոցների հաշվին 2014թ. աշնանը նախատեսվում է 10 հեկտար նոր անտառազանգվածի ստեղծման ծրագիր Աշոցքի անտառապետության տարածքում:

h/h	Միջոցառման անվանումը	Պլանավորված /մլն դրամ/	
		Տարեկան նախատեսված /պետ. բյուջե/	2014թ. առաջին կիսամյակի ընթացքում փաստացի
1	Շիրակի մարզի անտառների վերականգնում և շուրջ 200հա նոր անտառների հիմնում	60,0	0
2	Արոտավայրերի և խոտհարքների արդյունավետության բարձրացում, ջրաբքիացման համակարգերի ստեղծում	180,0	124.0
3	<<Արփի լիճ>> ազգային պարկի բուժերային գոտում ընդգրկված թվով 14 համայնքներում սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերի իրականացում:	30,0	34.7

Բնապահպանական ոլորտի արդյունքային ցուցանիշները.

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ /տարեկան պլան/	2014 թվականի առաջին կիսամյակի արդյունքը
Արոտավայրերի և խոտհարքների արդյունավետության բարձրացում, ջրարբիացման համակարգերի ստեղծում	1. մարզի Սարալանջ, Նահապետավան, Արևշատ, Ծաղկուտ համայնքներն ընդգրկվել են «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրում /2011-2015թթ/: 2. Ստեղծվել են գյուղացիական կոպերատիվներ: 3. Գյուղամերձ եւ հեռագնա արոտավայրերում բարելավման միջոցառումների իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատրաստում: 4. Կառուցվել է ջրարբիացման համակարգ:	4 համայնք 4 համայնք 4 համայնք 1 համայնք	4 համայնք 4 համայնք 4 համայնք 1 համայնք
<<Արփի լիճ>> ազգային պարկի բուֆերային գոտում ընդգրկված թվով 14 համայնքներում սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերի իրականացում:	1. Մարզի հյուսիս-արեւմուտքում ստեղծված «Արփի լիճ» ազգային պարկի աջակցության ծրագրի բաղադրիչով բուֆերային գոտում ընդգրկված թվով 14 համայնքներում իրականացվել են խոշոր եղջերավոր անասունների արհեստական սերմնավորման միջոցառումներ, ինչպես նաև մեղվաբուծության զարգացման նպատակով ձեռք են բերվել մեղվաընտանիքներ: 2. Հկ-ների ակտիվ գործունեություն:	14 համայնք 3 ՀԿ-ներ	14 համայնք 3 ՀԿ-ներ

6.3. Խնդիրները

Շիրակի մարզը մեկն է Հայաստանի Հանրապետության այն տարածաշրջաններից, որին բնորոշ են երկրում առկա գրեթե բոլոր բնապահպանական հիմնախնդիրները: Դրանք են անտառային ռեսուրսների և պահպանվող տարածքների սակավությունը, կենցաղային թափոնների հեռացման եւ արդյունավետ կառավարման մեխանիզմների բացակայությունը, հողերի դեգրատացիայի կանխումը:

Մարզում պահպանվող տարածքների ընդլայնման առումով շատ կարևոր է <<Արփի լիճ>> ազգային պարկի կայացմանը նպաստող միջոցառումների իրականացում և առնվազան երկու նոր արգելավայրերի հիմնում:

Մարզի ալպիական գոտու դեգրատացված արոտավայրերում ջրարբիացման համակարգերի տեղադրում, բարելավման արդյունավետ օգտագործման միջոցառումների իրականացում:

6.4. Քաղած դասերը և հետագա քայլերը

Կատարած դիտարկումները ցույց տվեցին, որ բնապահպանության ոլորտի առաջընթացը մեծապես կախված է տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության լայն շերտերի ակտիվ գործունեությունից:

Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենսդրության հետագա բարեփոխումները ենթադրում են պետության որոշակի գործառնությունների փոխանցում տեղական մակարդակ: Դա վերաբերվում է նաև բնական ռեսուրսների կառավարմանն ու բնապահպանական գործունեությանը: Սակայն ստացած լիազորությունների իրագործման ունակությունը կախված է տեղական մարմիններում աշխատող մասնագետների գիտելիքներից և կարողություններից: Հետևաբար շատ կարևոր է տեղեկատվական և խորհրդատվական բնույթի տարբեր նյութերի մշակման, ինչպես նաև կադրերի ուսուցման և որակավորման բարձրացման խնդիրը:

7. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

7.1 Քաղաքականության վերլուծություն

2014թ. քաղաքաշինության բնագավառի հիմնախնդիրները կապված են երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծման, զոհված /մահացած/ և հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման ինչպես նաև կրթական, առողջապահական, մշակութային, ճանապարհաշինության և այլ ոլորտներում մարզի համայնքների կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության վերահսկողության հետ:

ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերում՝ հատկապես Գյումրի քաղաքում, դեռևս պահպանվում է բնակարանային պահանջարկի բարձր մակարդակը: Բնակարանային ապահովման ծրագրերի իրականացման արդյունքում մարզում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակում հաշվառված ընտանիքներից ՀՀ քաղաքաշինության նախարարության բնակարանային բաշխման հանձնաժողովի կողմից այսօրվա դրությամբ շահառու են ճանաչվել 736 ընտանիքներ, այդ թվում ք.Գյումրի՝ 433:

7.2 Իրականացման առաջընթացը

Մարզի 2014-2017թթ. սոցիալ տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. նախատեսված է քաղաքաշինության ոլորտում իրականացնել 15 979.4 մլրդ. դրամի քաղաքաշինական աշխատանքներ, որի դիմաց կատարվել է 100.0 մլն. դրամի շինմոնտաժային աշխատանքներ: Ծրագրի թերակատարման պատճառ է հանդիսացել այն, որ աշխատանքներ չեն իրականացվել Գյումրի քաղաքում և մարզի գյուղական բնակավայրերում, ինչպես նաև թերակատարվել են Ախուրյան

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

գյուղում իրականացվելիք բնակարանային աշխատանքները: Թերակատարման պատճառ է հանդիսացել եղանակային պայմանները:

Ստորև ներկայացվում է տարեկան ծրագրի և դրա կատարման կիսամյա արդյուքներն ըստ ոլորտների

Բնակարանաշինություն

Երկրաշարժի պատճառած վնասների վերականգնման նպատակով 2014-2017թթ. սոցիալ տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. նախատեսված 4890.0 մլն. դրամի դիմաց ՀՀ պետական բյուջեից հատկացված 4750.0 մլն. դրամի շրջանակներում Գյումրի քաղաքում իրականացվելու էր 433 բնակարաններով թվով 8, իսկ Ախուրյան գյուղում 136 բնակարաններով թվով 4 բազմաբնակարան բնակելի շենքերի, մարզի 19 գյուղական համայնքներում թվով 167 բնակելի տների կառուցման աշխատանքներ, սակայն ինչպես նշվեց՝ ծրագիրը ամբողջությամբ չի իրականացվել:

Բնակարանաշինության ոլորտում 2014թ. նախատեսված և I եռամսյակում կատարված աշխատանքները ներկայացվում են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Հ/Հ	Օբյեկտի անվանումը	2014թ. հատկացված գումարը /մլն.դրամ/	Ֆինանսավորման աղբյուրը
1	Գյումրի քաղաքում 433 բնակարաններով թվով 8 բազմաբնակարան շենքերի կառուցում	4 890.0	Այլ աղբյուրներ
2	Մարզի 19 գյուղական համայնքներում թվով 167 բնակելի տների կառուցում	850.0	Այլ աղբյուրներ
3	Գ. Ախուրյան 136 բնակարաններով թվով 4 բազմաբնակարան շենքերի շինարարություն	926.5	Այլ աղբյուրներ
4	ք. Մարալիկ	33.5	Այլ աղբյուրներ
	Ընդամենը	6 700.0	

Կրթական օբյեկտների շինարարություն

Մարզի 2014-2017թթ. ՄԶԾ ծրագրի 2014թ. ՏԱՊ-ով նախատեսված է թվով 44 կրթական օբյեկտներում նախատեսված էր կատարել 4529.6 մլն. դրամ գումարի աշխատանքներ, սակայն ծրագիր են ընդգրկվել թվով 9 օբյեկտներ, որոնցում կատարվել է 1304.7 մլն. դրամ գումարի աշխատանքներ:

ՀՀ պետական բյուջեից հատկացված և այլ ֆինանսական միջոցների հաշվին իրականացվելու է թվով 1 նոր դպրոցի կառուցում, 3-ում՝ հիմնանորոգում, 5-ում՝ մասնակի վերանորոգում, 2 մանկապարտեզների կառուցում, 2-ում վերանորոգման աշխատանքներ:

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

ՀՀ կառավարության 2014 թվականի ապիլի 10-ի N 532-Ն որոշմամբ մարզի առաջնահերթ լուծում պահանջվող կրթական օբյեկտների վերանորոգման համար հատկացվեց ևս 286.0 մլն. Դրամ գումար որով կիրականացվի 24 կրթական օբյեկտների (դպրոցներ) մասնակի վերաներոգում, որից 6 օբյեկտի ջեռուցման համակարգի անցկացում:

Ըստ առանձին օբյեկտների՝ տվյալները ներկայացվում են աղյուսակի տեսքով:

Հ/Հ	Միջոցառման համառոտ բովանդակությունը	2014թ. հատկացված գումարը /մլն.դրամ/	Ֆինասավորման աղբյուրը	Ծանոթություն /աշխատանքների ընթացքի վերաբերյալ/
1.	Երազգավորս համայնքի դպրոցի մարզադահլիճի հատակների վերանորոգում	10,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
2.	Բասեն համայնքի դպրոցի մարզադահլիճի հատակների և տանիքի մասնակի վերանորոգում	11,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
3.	Մայիսյան համայնքի դպրոցի շենքի ջեռուցման համակարգի անցկացում և պատուհանների մասնակի փոխարինում	17,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
4.	Հայկավան համայնքի դպրոցի տանիքի վերանորոգում	12,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
5.	Սարալանջ համայնքի դպրոցի պատուհանների վերանորոգում և ջրհորդանների տեղադրում	16,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
6.	Շիրակավան համայնքի դպրոցի մարզադահլիճի և հանդիսությունների սրահի պատուհանների փոխարինում և մասնակի վերանորոգում	13,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
7.	Բագրավան համայնքի դպրոցի տանիքի մասնակի և մարզադահլիճի հատակների վերանորոգում	10,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
8.	Ձորակապ համայնքի դպրոցի պատուհանների մասնակի փոխարինում	12,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
9.	Լուսակերտ համայնքի դպրոցի տանիքի վերանորոգում	13,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
10.	Կարմրավան համայնքի դպրոցի շենքի մասնակի վերանորոգում	10,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
11.	Գյումրու թիվ 18 դպրոցի դահլիճի ծածկի ամրացում	3,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
12.	Գյումրու թիվ 38 դպրոցի բակի բարեկարգում	10,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
13.	Գյումրու թիվ 27 դպրոցի պատուհանների և դռների մասնակի փոխարինում	14,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
14.	Գյումրու թիվ 31 դպրոցի պարսպապատում	6,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
15.	Կառնուտ համայնքի դպրոցի վերանորոգում	15,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

16.	Փոքր Մանթաշ համայնքի դպրոցի տանիքի վերանորոգում	16,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
17.	Արթիկ համայնքի թիվ 5 դպրոցի պատուհանների փոխարինում	8,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
18.	Նահապետավան համայնքի դպրոցի շենքի մասնակի վերանորոգում	14,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
19.	Քարաբերդ համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում	17,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
20.	Ջրառատ համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում	15,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
21.	Հարթաշեն համայնքի դպրոցի արտաքին կոյուղագծի կառուցում	5,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
22.	Հայրենյաց համայնքի դպրոցի վերանորոգում և ջեռուցման համակարգի կառուցում	15,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
23.	Ջաջուռ համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում	17,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
24.	Մեծ Մեղասար համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում	7,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
25.	Գյումրի-ՀՀ ԳԱԱ Ա.Նազարյանի անվան ԵԻՄԻ անավարտ շենքի կառուցում	298,4	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
26.	<<Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան>> ՊՈԱԿ-ում սահմանափակ կարողություններ ունեցող ուսանողների համար անհրաժեշտ հարմարություններով (սանդուղքներ, թեքահարթակներ, բազրիքներ, վերելակներ) համալրման աշխատանքներ	100,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
27.	<<Գյումրու թիվ 3 արհեստագործական պետական ուսումնարան>> ՊՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքներ	182,2	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
28.	ք. Գյումրի Արվեստի դպրոց Մ. Մկրտչյան 47 (Օյունջյան դպրոցի տարածք)	315,0	Այլ աղբյուրներ	Ընթացքի մեջ է
29.	<<Ամասիայի արհեստագործական պետական ուսումնարան>> ՊՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքներ	135,0	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է
30.	Աշոցք համայնքի միջնակարգ դպրոցի կառուցում	60,0	ՀՀՀ	Ընթացքի մեջ է
31.	Ազատան համայնքի մանկապարտեզի կառուցում	95,0	ՀՀ պետական բյուջե, ՀՄՆՀ	Ընթացքի մեջ է
32.	Գեղանիստի մանկապարտեզի շենքի կառուցում	90,0	Այլ աղբյուրներ	Ընթացքի մեջ է
33.	Անուշավան համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում	29,1	ՀՀ Պետական բյուջե	Ընթացքի մեջ է

Առողջապահության օբյեկտների շինարարություն

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

2014թ. ՀՄՆՀ-ի կողմից շարունակվել են Մարալիկ քաղաքի հիվանդանոցի հիմնանորոգման, պաթալոգիաանատոմիական լաբորատորիայի կառուցման աշխատանքները:

Ըստ առանձին օբյեկտների տվյալները ներկայացվում են աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 3

	Օբյեկտի անվանումը	Ֆինանսավորման աղբյուրը	2014թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014թ. ՏԱՊ-ով նախատեսված կարիքների արժեքը	Կատարվել է 2014թ.
	Առողջապահական օբյեկտ		205,0	217,0	217,0
1	ք. Գյումրի <<Պաթոլոգոանատոմիական լաբորատորիա>>-ի նոր շենքի կառուցում	ՀՄՆՀ	80,0	150,0	150,0
2	Մարալիկի հիվանդանոցի շենքի հիմնանորոգում	ՀՄՆՀ		67,0	67,0
3	ք. Գյումրի թիվ 2 պոլիկլինիկայի վերանորոգում		40,0		
4	ք. Արթիկ <<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի շենքի վերանորոգում, ջեռուցում		20,0		
5	գ. Փանիկ <<Փանիկի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի շենքի կտուրի վերանորոգում, ներքին հարդարում		25,0		
6	գ. Ախուրյան <<Ախուրյանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի դիսպանսերային մասնաշենքի կառուցում		40,0		

Մշակույթի և սպորտի օբյեկտների շինարարություն

ՄԶԾ 2014թ. նախատեսվում է աշխատանքներ իրականացնել թվով 20 մշակութային օբյեկտներում: Սակայն 2014թ.նախատեսված ծրագրերից ոչ մեկը չեն ֆինանսավորվել: Իսկ ՄԶԾ-ով 2014թ. 1-ին եռամսայկում նախատեսված թվով 10 մարզական օբյեկտներից 2014թ. ոչ մեկը չեն ֆինանսավորվել: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից Գյումրի քաղաքում իրականացվում է ֆուտբոլի ակադեմիաի, Ամասիայի մարզադպրոցի կառուցման, իսկ ՀՄՆՀ-ի կողմից Ամասիայի մարզամշակութային կենտրոնի վերանորոգման աշխատանքները:

Ըստ առանձին օբյեկտների տվյալները ներկայացվում են աղյուսակի տեսքով

Աղյուսակ 3

	Օբյեկտի անվանումը	Ֆինանսավորման աղբյուրը	2014թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014թ. ՏԱՊ-ով նախատեսված կարիքների արժեքը	Կատարվել է 2014թ.
	Սպորտային օբյեկտներ		981,0	194,0	194,0
1	Ամասիայի մարզամշակութային կենտրոն	ՀՄՆՀ		114,0	114,0

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

2	Մուշ-2 թաղամաս Գյումրու ֆուտբոլի ակադեմիա	Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա		60,0	60,0
3	Ամասիայի մարզադաշտ	Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա		20,0	20,0
4	Գյումրի քաղաքում մարզական ժամանակակից համալիրի կառուցում		140,0		
5	<<Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ>> ՊՈԱԿ-ի ննջարանային մասնաշենքի կառուցում		110,0		
6	ք.Գյումրի <<Օլիմպիական հերթափոխի մարզական>> քոլեջ		100,0		
7	ք.Գյումրի <<Համալիր մանկապատանեկան մարզադպրոց>> /կառուցում/		31,0		
8	ք.Գյումրու <<Հայաստան>> մարզական միության լողավազան /կառուցում/		260,0		
9	ք.Գյումրի <<Աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի աթլետիկայի մանեժի>> /կառուցում/		90,0		
10	ք.Գյումրի <<Ծանրամարտի մարզադպրոցի կառուցում>> /կառուցում/		250,0		

7.3 Խնդիրները

Չնայած քաղաքաշինության ոլորտում իրականացված աշխատանքներին, մարզում այնուամենայնիվ, առկա են դեռևս չլուծված մի շարք հիմնախնդիրներ:

Մարզի առաջնահերթ խնդիրներից են երկրաշարժից և տարիների շահագործումից երրորդ աստիճանի վնասվածության բազմաբնակարան շենքերի ամրացման-վերականգնման աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը, որով հնարավոր կլինի ապահովել բնակարանային ֆոնդի պահպանումը և դրանց անվտանգ շահագործումը: Չնայած քաղաքաշինության ոլորտում իրականացված մեծածավալ աշխատանքներին, մարզում այնուամենայնիվ, առկա են դեռևս չլուծված մի շարք հիմնախնդիրներ:

Մարզում անհրաժեշտ է լուծել երկրաշարժից դեռևս անօթևան մնացած ընտանիքների բնակարաններով ապահովման հարցը՝ նոր բնակելի շենքերի և տների կառուցման ճանապարհով:

Հիմնախնդիրներից է նաև մարզում առկա 3-րդ և 4-րդ աստիճանի վթարայնություն ունեցող թվով 36 բազմաբնակարան շենքերի ամրացում-վերականգնումը և մարզի 9 համայնքներում առկա թվով 95 բազմաբնակարան շենքերի կտուրների վերանորոգումը:

7.4 Քաղաձ դասերը և հետագա քայլերը

Անհրաժեշտ է բարելավել բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների շինարարության և հիմնանորոգման, առողջապահական, մշակութային, մարզական օբյեկտների, բնակֆոնդի և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացները:

Մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում նախատեսվում է մշակել մարզի թվով 115 համայնքների գլխավոր հատակագծերը:

ՀՀ կառավարության կողմից հաստատված պահանջներին համապատասխան, անհրաժեշտ է իրականացնել Շիրակի մարզի բազմաբնակարան, հատուկ և հասարակական նշանակության շենքերի անձնագրավորում:

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. ՏԱՊ-ի քաղաքաշինության ոլորտի 2014թ. առաջին կիսամյակի գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի փաստացի կատարված ծախսեր

Հ/Հ	Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2014 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջեն	Փաստացի ֆինանսավորման չափը 01.07.2014թ. դրությամբ	Կատարման տոկոսը %
1	2	3	4	5	6
1	Քաղաքաշինություն	15 979,4	11 536,2	3 844,5	33,3
	<i>որից՝</i>				
	ՀՀ պետական բյուջե				
	սեփական միջոցներ	15 979,4	8 300,0	1 579,0	19,0
	վարկային միջոցներ				
	միջ. կազմակերպություններ և դոնորներ				
	համայնքային բյուջե				
	մասնավոր ներդրողներ				
	այլ աղբյուրներ		3 236,2	2 265,5	70,0

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Ճանապարհաշինություն

8.1 Քաղաքականության վերլուծություն

8.1.1. Ճանապարհաշինություն

Ճանապարհաշինության ոլորտում իրականացվող քաղաքականությունը ուղղված է առկա ճանապարհային ցանցի հիմնանորոգմանը, վերանորոգմանը և պահպանմանը:

2014թ. ՄԶԾ աշխատանքային պլանով նախատեսվել են

ա/ միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների նորոգում

բ/ միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ

գ/ մարզային նշանակության ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ, որի համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 105.2 մլն. դրամ գումար:

Վերոհիշյալ աշխատանքներն իրականացնելու համար հիմնանորոգման ժամանակ կատարվում է ինչպես փոսային նորոգում, այնպես էլ միաշերտ ասֆալտբետոնյա ծածկի կառուցման աշխատանքներ, իսկ վերանորոգման, և սպարկման ժամանակ՝ նաև կոպճապատման և հողային հարթեցման աշխատանքներ:

8.1.2. Ջրամատակարարում և ջրահեռացում

Ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջուր մատակարարելու, ինչպես նաև ոռոգման խնդիրների բարելավմանը, որը ուղղակիորեն կնպաստի մարզի բնակչության աղքատության նվազեցմանը:

Ոլորտում անհրաժեշտ է զգալի ներդրումներ, ներառյալ ջրամատակարարման, ջրահեռացման առկա համակարգերի պահպանման և վերականգնման աշխատանքների իրականացման նպատակով:

Ջրամատակարարող ընկերությունների կառավարման համակարգի բարելավումը նույնպես կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Այդ ընկերությունների ֆինանսական կենսունակությունը պայմանավորված է շահագործման ծախսերի արդյունավետությամբ և վճարների հավաքագրման մակարդակի բարելավմամբ: Բացի այդ անհրաժեշտ է նաև նվազեցնել ջրի կորստի մակարդակը, որը հիմնականում ջրամատակարարման ցանցերի անմխիթար վիճակի հետևանքն է: Ջրի հաշվառման անկատար համակարգի բարելավումը նույնպես հանդիսանում է ոլորտի քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը:

ՄԶԾ-ն կարևորում է խմելու ջրի մատչելիության և հասանելիության, ինչպես նաև ջրի որակի խնդիրները, որոնք էապես ազդում են բնակչության կենսամակարդակի վրա: Մարզի 3 քաղաքային և 116 գյուղական համայնքներից միայն 3 քաղաքային (Գյումրի, Արթիկ Մարալիկ) համայնքներն են խմելու ջուրը ստանում կենտրոնացված ջրամատակարարման համակարգերից, որտեղ սահմանված կարգով կատարվում է ջրի վարակազերծում: Մյուս բնակավայրերի, հատկապես գյուղական բնակավայրերի մի մասի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հիմնականում հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են խիստ անբարվոք ու մաշված վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը ստանդարտներին համապատասխան որակյալ ջրամատակարարման հարցում: Գլխամասային կառույցները չունեն սանիտարական պահպանման գոտիներ, բնակչությանը տրվող ջուրը հիմնականում չի վարակազերծվում:

8.1.3. Գազամատակարարում

Գազիֆիկացումը մարզի զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է: Երկարատև ձմեռները և այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում են բնական գազի մատակարարման հրատապությունը համայնքների համար: Միաժամանակ գազի առկայությունը յուրաքանչյուր տնային տնտեսությունում հնարավորություն կտա տնտեսել տարեկան շուրջ 10-12 խ.մ. վառելիքայտ, որն իր հերթին նշանակում է շրջակա միջավայրի էկոհամակարգի բարելավում:

Համայնքներում գերակայություն է համարվում գազամատակարարման ցանցի կառուցումը: <<Հայրուսգազարդ>> ՓԲԸ-ի կողմից նախատեսվել է իրականացնել գազատար ցանցերի ընթացիկ վերանորոգման, գազամատակարարման ռեժիմի կարգավորման աշխատանքներ:

8.2. Իրականացման առաջընթացը

8.2.1. Ճանապարհաշինություն

Մարզային նշանակության ճանապարհների ձևաշին, ընթացիկ պահպանության և շահագործման, ինչպես նաև Գյումրի քաղաքում ներհամայնքային փողոցների վերանորոգման աշխատանքներն իրականացնելու նպատակով 2014թ. փաստացի հատկացվել է 454,6 մլն.դրամ գումար:

Ստորև ներկայացվում է մարզում ճանապարհաշինարարական ոլորտում 2014թ. ընթացքում իրականացվող աշխատանքները:

Աղյուսակ 1

Հ/Հ	Օբյեկտի անվանումը	2014թ. հատկացված գումարը /մլն.դրամ/	Ֆինանսավորման աղբյուրը	Ծանոթություն
1	Գյումրի համայնքի Շիրակացի փողոցի վերանորոգում (Ալեք Մանուկյան փողոցից մինչև Դուդկո փողոց)	124,4	ՀՀ պետական բյուջե	Ընթացքի մեջ է
2	Գյումրի համայնքի Պռոշյան փողոցի (Գ. Նժդեհ փողոցից մինչև մարզային ոստիկանության շենք) մասնակի վերանորոգում	15,0	ՀՀ պետական բյուջե	Ընթացքի մեջ է
3	Գյումրի համայնքի Գորկու փողոցի մասնակի վերանորոգում (Մուսայելյան փողոցից մինչև Խաղաղության օղակ)	80,0	ՀՀ պետական բյուջե	Ընթացքի մեջ է
4	Ախուրյան համայնքի Վազգեն Ա փողոցի մասնակի վերանորոգում	40,0	ՀՀ պետական բյուջե	Ընթացքի մեջ է
5	Հովունի համայնք մտնող ճանապարհի մասնակի վերանորոգում (ավազակոպիճային ծածկույթ)	10,0	ՀՀ պետական բյուջե	Ընթացքի մեջ է
6	Մարալիկ համայնքի Թումանյան փողոցի մասնակի վերանորոգում	40,0	ՀՀ պետական բյուջե	Ընթացքի մեջ է
7	Ձորակապ համայնքի 1-ին փողոցի մասնակի վերանորոգում	20,0	ՀՀ պետական բյուջե	Ընթացքի մեջ է
8	Արթիկ համայնքի Անկախության փողոցի մասնակի փոսային նորոգում	10,0	ՀՀ պետական բյուջե	Ընթացքի մեջ է
9	Մ-1 Մարագյուղ ճանապարհի մասնակի վերանորոգում (ավազակոպիճային ծածկույթ)	10,0	ՀՀ պետական բյուջե	Ընթացքի մեջ է
	Մարզային նշանակության ավտոճանապարհների ձևաշին պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում՝ այդ թվում			
10	Ավտոմոբիլային ճանապարհների մարզային (տեղական նշանակության) ընթացիկ, ձևաշին պահպանություն ու շահագործում(ճանապարհի երկ.-458.3կմ.)	105,2	ՀՀ պետական բյուջե	Ընթացքի մեջ է
	Ընդամենը	454,6		

8.2.2. Ջրամատակարարում և ջրահեռացում

2014թ. Գերմանական KFW զարգացման բանկի աջակցությամբ իրականացվում է Շիրակի մարզի, ինչպես նաև Գյումրի քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի վերանորոգման ծրագրի 2-րդ փուլը, որի համար հատկացվել է 4,158 մլրդ դրամ գումար:

Կապսի ջրամբարի կառուցման նպատակով կատարվում են համապատասխան ուսումնասիրություններ, որի արդյունքում կազմվելու է նախագիծա-նախահաշվային

փաստաթղթերը: Նշված գործընթացի իրականացման համար Գերմանական զարգացման վարկային բանկի աջակցությամբ և ՀՀ պետական բյուջեի միջոցներից հատկացվել է 192,3 մլն դրամ գումար:

8.2.3. Էներգետիկա

Գերմանական KFW բանկի աջակցությամբ <<ՀԷՑ>> ՓԲԸ-ի կողմից սեփական միջոցների հաշվին 2014թ. ընթացքում իրականացվում է <<Գյումրի-2>> 220/110/10 կվ ենթակայանի վերանորոգման աշխատանքները, որի համար հատկացվել է 415,6 մլն. դրամ գումար:

Մարզի համայնքներում իրականացվում են նաև տրանսֆորմատորային ենթակայանների և տրանսֆորմատորային կայանների, ինչպես նաև անջատիչների, բաշխիչ բջիջների, բաժանիչների, գատիչ կարճ փակիչների վերանորոգման աշխատանքներ, որի համար հատկացվել է 415,6 մլն. դրամ գումար:

8.3.Խնդիրները

8.3.1.Ճանապարհաշինություն

Մարզի տարածքում կատարվող ճանապարհաշինական աշխատանքների կատարման ժամանակ առաջանում են որոշակի դժվարություններ և խնդիրներ՝ մասնավորապես եղանակային անբարենպաստ պայմանները /շինարարական աշխատանքների սկսմանը զուգահեռ /ապրիլ, մայիս, հունիս ամիսներին/ բավականին երկար ժամանակով սկսվեցին անձրևային եղանակներ, ինչը խոչնդոտ հանդիսացավ աշխատանքների ժամանակին կատարմանը:

8.3.2. Ջրամատակարարում և ջրահեռացում

Մարզի հատկապես գյուղական համայնքների խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ցանցերի հիմնական մասը ունեն 30-40 տարվա հնություն, խարխլված են և ենթակա են հիմնանորոգման: Պետբյուջեի և այլ ներդրողների սուղ միջոցները բավարար չեն հիմնախնդիրները կարգավորելու համար, մինչդեռ ՀՀ պետական բյուջեով այդ նպատակով ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

8.3.3. Գազամատակարարում

Մարզում գազամատակարարման ծավալուն աշխատանքներ են իրականացվել 2009 թվականին և գազաֆիկացվել է մարզի թվով 26 համայնքներ՝ իրականացնելով միջին և ցածր ճնշման գազատար խողովակների ցանցերի աշխատանքները:

Սակայն սոցիալապես անապահով բազմաթիվ ընտանիքներ հնարավորություն չունեն բնակարանների անմիջական գազաֆիկացման աշխատանքների կատարմանը:

8.4.Քաղաքի դասերը և հետագա քայլերը

8.4.1.Ճանապարհաշինություն

Անհրաժեշտ է ապահովել տարվա բոլոր եղանակներին տրանսպորտային միջոցների հուսալի և անխափան երթևեկությունը, մարզային նշանակության ճանապարհների երկարակետությունը, շահագործումը և պահպանումը, համայնքների և մարզկենտրոնի միջև մշտական տրանսպորտային կապը, ինչպես նաև հեռավոր գյուղական համայնքների բնակչության մոտ նկատվող արտահոսքի միտումը:

Անհրաժեշտ է բարելավել ճանապարհաշինական փաստաթղթերի մշակման, մարզային ենթակայության ճանապարհների շինարարության և հիմնանորոգման կառավարման գործընթացները:

8.4.2.Ջրամատակարարում և ջրահեռացում

Գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի մեծ մասը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են խիստ անբարավոր ու մաշված վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը ստանդարտներին համապատասխան որակյալ ջրամատակարարման հարցում: Գլխամասային կառույցները չունեն սանիտարական պահպանման գոտիներ, բնակչությանը տրվող ջուրը հիմնականում չի վարակազերծվում:

Հաջորդ տարվա բյուջետային հայտերը կազմելիս պետք է հաշվի առնվեն մարզի զարգացման ծրագրով նախատեսված առաջնահերթությունները:

8.4.3. Գազամատակարարում

Գազամատակարարման ոլորտում իրականացվելիք ներդրումային քաղաքականությունը պետք է ուղղված լինի գազամատակարարման հասանելիության աստիճանի բարձրացմանը: Անհրաժեշտ է գազիֆիկացման աշխատանքներ իրականացնել գյուղական, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում՝ բնակչության արտահոսքը կանխելու և գյուղերի հետագա զարգացման համար նպաստավոր սոցիալական պայմաններ ստեղծելու համար:

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. ՏԱՊ-ի մարզային և համայնքային ենթակառուցվածքների ոլորտի 2014թ. առաջին կիսամյակի գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի փաստացի կատարված ծախսեր

Հ/Հ	Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2014 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2014թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջեն	Փաստացի ֆինանսավորման չափը 01.07.2014թ. դրությամբ	Կատարման տոկոսը %
1	2	3	4	5	6
7	Ենթակառուցվածքներ	16 955,5	4 871,1	5 220,5	107,2
	որից՝				
	ՀՀ պետական բյուջե				
	սեփական միջոցներ		105,2	454,6	432,1
	վարկային միջոցներ		4 350,3	4 350,3	100,0
	միջ. կազմակերպություններ և դոնորներ				
	համայնքային բյուջե				
	մասնավոր ներդրողներ				
	այլ աղբյուրներ	13 714,0	415,6	415,6	100,0

9. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ

9.1 Քաղաքականության վերլուծություն

9.1.1.Տարածքային կառավարման բնագավառ

Մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ապահովման, առաջնահերթ հիմնախնդիրների լուծման, ինչպես նաև համայնքների շահերին վերաբերվող ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության, ՀՀ Շիրակի մարզպետի որոշումների մասին իրազեկման և իրավական ակտերի կիրարկումն ապահովելու գործում կարևոր դերակալություն է ունեցել 2014 թվականի փետրվարի 26-ին և հունիսի 10-ին անցկացված մարզի խորհրդի նիստերը:

Մարզի խորհրդի նիստերում քննարկվել են գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման ուղղությամբ տարվող աշխատանքների, գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման, դրանց ընթացքի և ոռոգման համակարգերի նախապատրաստության, մարզի համայնքների բյուջեների 2014 թվականի հինգ ամիսների սեփական եկամուտների կատարման, մարզի

համայնքներում գնումների կազմակերպման գործընթացի, հուշարձանների պահպանության, մարզում սանիտարական պատշաճ մաքրության ապահովման վերաբերյալ հարցեր:

ՀՀ տարածքային կառավարման նախարարի, փոխվարչապետի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 159-Ա հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում վարչական հսկողություն իրականացնելու 2014 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն, 2014 թվականի առաջին կիսամյակում նախատեսված ՀՀ Շիրակի մարզի թվով 20 համայնքներից նույնքանում իրականացվել է վարչական հսկողություն:

ՀՀ Շիրակի մարզպետի համապատասխան որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբերը վարչական հսկողության աշխատանքներն իրականացրել են Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 20-ի ՆՀ-728 հրամանագրով սահմանված դրույթների և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի և արդարադատության, առողջապահության, արտակարգ իրավիճակների, բնապահպանության, էկոնոմիկայի, էներգետիկայի և բնական պաշարների, գյուղատնտեսության, կրթության և գիտության, մշակույթի, պաշտպանության, աշխատանքի և սոցիալական հարցերի, սպորտի և երիտասարդության հարցերի, տրանսպորտի և կապի, քաղաքաշինության նախարարների, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի, ՀՀ ոստիկանության պետի համատեղ հրամաններով հաստատված հարցաշարերին համապատասխան:

Վարչական հսկողության ընթացքում ուսումնասիրվել են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների կատարման օրինականությունը, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, արտակարգ իրավիճակների, բնապահպանության, մշակույթի, սոցիալական պաշտպանության, կրթության, առևտրի և ծառայությունների, հողօգտագործման, անասնաբուժության, տրանսպորտի և կապի, ընդերքօգտագործման և այլ բնագավառներում համայնքների ղեկավարների գործունեությունը: Հսկողության հարցաշարերի ներդրմամբ առավել հստակեցվել և կանոնակարգվել են տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացվող վարչական հսկողության բովանդակությունը, հսկողության ոլորտները, սահմանները և միջամտող միջոցառումները:

Համայնքներում իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով համայնքների ղեկավարներին համապատասխան գրավոր առաջարկություններ են արվել՝ կազմված արձանագրությունը և հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ արված առաջարկություններն ընդգրկելու համայնքի ավագանու նիստի օրակարգում, քննարկել և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումները սահմանված ժամկետներում վերացնելու ուղղությամբ:

Վարչական հսկողության արդյունքները քննարկվել են համայնքների ավագանու նիստերում, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները և դրանց վերացման ուղղությամբ արված առաջարկությունները համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվել են ամբողջությամբ և հսկողություն իրականացրած

պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից առարկություններ չեն ներկայացվել:

Համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կազմվել և գործողության մեջ են դրվել արձանագրված խախտումներ վերացնելու ժամանակացույցեր, համաձայն որոնց սահմանված ժամկետներում ձեռնարկված միջոցառումների արդյունքում ամբողջությամբ վերացվել են խախտումները:

Կատարված աշխատանքների ընթացքի մասին համայնքների ղեկավարների կողմից ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացվել են համապատասխան տեղեկատվություններ, որոնք ամփոփվել և սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

Վարչական հսկողության իրականացման ընթացքում տեղերում անհրաժեշտ աջակցություն և խորհրդատվություն է կազմակերպվել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ իրենց լիազորությունների իրականացման հարցերով:

9.1.2. Տեղական ինքնակառավարման բնագավառ

Բյուջետավորման գործընթացի կանոնակարգման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման շնորհիվ 2014 թվականի հինգ ամիսներին ապահովվել է համայնքների բյուջեների կատարման բարձր մակարդակ (97.9%): Հատկապես բարձր ցուցանիշներ են արձանագրվել համայնքների բյուջեների սեփական եկամուտների, մասնավորապես՝ հիմնական եկամուտ հանդիսացող գույքահարկի և հողի հարկի հավաքագրման գործում:

2014 թվականի հինգ ամիսներին համայնքների բյուջեներում «Ֆինանսական համահարթեցման մասին» և «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքների համաձայն նախատեսված դոտացիայի ընդհանուր ծավալը կազմել է 1 574 310.1 հազ. դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 59 974.4 հազ. դրամով (աճը կազմում է 4.0 տոկոս):

2014 թվականի հինգ ամիսներին մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել են 94.7 %-ով, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 13.0 %-ով: Մարզի համայնքների բյուջեների եկամուտների հիմնական ցուցանիշ համարվող գույքահարկի հավաքագրման մակարդակը կազմել է 105.8%, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 21.5 %-ով, իսկ հողի հարկի հավաքագրումը կազմել է 81.3%:

2014 թվականի հինգ ամիսներին համայնքների բյուջեների սեփական եկամուտների փաստացի հավաքագրվածի աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 12.0 % կամ գումարային առումով ավել է հավաքագրվել 71668.3 հազ. դրամ:

2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքների բյուջեների եկամուտների աճին զուգընթաց զգալիորեն ավելացել են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքներում մատուցվող ծառայությունների ծավալներն ու որակը:

Դրական տեղաշարժեր են արձանագրվել հատկապես սանիտարական մաքրման, աղբահանության, համայնքային ենթակայության կազմակերպությունների նյութատեխնիկական բազաների համալրման, համայնքների զարգացման ծրագրերով նախատեսված աշխատանքների կատարման ուղղությամբ:

Համայնքների ղեկավարների կողմից հետևողական աշխատանքներ են իրականացվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերով սահմանված բարեկարգման, կանաչապատման, աղբահանության և սանիտարական մաքրման բնագավառում համայնքի ղեկավարին վերապահված պարտադիր լիազորությունների կատարման ուղղությամբ:

Համայնքների ընդհանուր օգտագործման տարածքներում՝ փողոցներում, հրապարակներում, զբոսայգիներում, արտադրական, գիտակրթական, մշակույթային օբյեկտներին հարող և հանրության կողմից օգտագործվող այլ տարածքներում շրջակա միջավայրի բարելավման նպատակով 2014 թվականի մայիսի 1-ից հունիսի 1-ը մարզում հայտարարվել է սանիտարական մաքրման, կանաչ տարածքների ընդլայնման և բարեկարգման միամսյակ: Կատարված աշխատանքները լայնորեն լուսաբանվել են տեղական լրատվամիջոցներով:

Համայնքների բյուջեների, պետական բյուջեի և ներգրավված այլ միջոցներով մարզի առանձին համայնքներում կատարվել են միջհամայնքային և ներհամայնքային նշանակության ճանապարհների, մշակույթի տների, համայնքային կենտրոնների, նախակրթարանների, բնակավայրերի ջրատնտեսական համակարգերի և ինժեներական այլ կառուցվածքների վերանորոգման աշխատանքներ:

2014 թվականի հինգ ամիսների ընթացքում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-կետի 8-րդ ենթակետով սահմանված յոթնօրյա ժամկետում ՀՀ Շիրակի մարզպետարանում ստացվել է մարզի բոլոր 119 համայնքների կողմից ընդունված բոլոր որոշումները՝ թվով 666: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.5 հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան ուսումնասիրվել են մարզպետարան ստացված համայնքների ավագանիների բոլոր որոշումների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: Ուսումնասիրության արդյունքում մարզպետարան ստացված ավագանիների որոշումներից 385-ը համապատասխանել են ՀՀ օրենսդրությանը, իսկ թվով 281 ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ կազմվել են առարկություններ (տեսակարար կշիռը՝ 42.2 %) և համապատասխան առաջարկություններով ուղարկվել են համայնքների ղեկավարներին:

Մարզպետի կողմից ներկայացված առարկությունները քննարկվել են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, դրանք ընդունվել են ամբողջությամբ, օրենքով սահմանված կարգով և ժամկետում իրավական ակտերը համապատասխանեցվել են ՀՀ օրենսդրությանը և արդյունքների մասին ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացվել են տեղեկատվություններ:

Մարզպետարանի դիրքորոշման հետ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից չհամաձայնվելու կամ ավագանու որոշումները անվավեր ճանաչելու նպատակով մարզպետարանի կողմից դատական հայց ներկայացնելու դեպքեր չեն արձանագրվել:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում, նախորդ տարիների համեմատությամբ, էականորեն բարելավվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ օրենսդրությանը համապատասխան իրավական ակտերի ընդունման գործընթացը:

ՀՀ ընտրական օրենսգրքով մարզպետարանին վերապահված լիազորությունների շրջանակներում կիսամյակի ընթացքում մարզի թվով 14 համայնքներում նախապատրաստվել և անցկացվել են տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններ, որից 6-ը՝ համայնքների ղեկավարների և 8-ը՝ ավագանու անդամների: Ընտրությունների արդյունքներով Բավրայի և Յողամարզի համայնքներում ընտրվել են համայնքների նոր ղեկավարներ:

9.1.3. Համայնքային ծառայության բնագավառ

Ամենօրյա աշխատանք է տարվել քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերի կադրային գործի բարելավման և համայնքային ծառայության ներդրման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

2014 թվականի հունիսի 20-ի դրությամբ մարզի համայնքներում առկա 613 համայնքային ծառայության պաշտոններից զբաղեցված են 512-ը: Թափուր մնացած 101 պաշտոններից 64-ը զբաղեցված են ժամկետային աշխատանքային պայմանագրերով:

Սահմանված կարգով նախապատրաստվել և անցկացվել է թվով 98 համայնքային ծառայողների /5 խումբ/ հերթական վերապատրաստումը՝ Գյումրի և Արթիկ քաղաքներում: Համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի նկատմամբ իրականացվել է պատշաճ վերահսկողություն և արդյունքները ժամանակին ներկայացվել են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն:

2014 թվականի առաջին կիսամյակում մարզի թվով 31 համայնքներում նախապատրաստվել և անցկացվել է համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության 72 թափուր պաշտոնների 87 մրցույթ, որից 64-ը կայացել է:

Մարզի համայնքներում համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթների հայտարարությունները տեղադրվել են «Ազդարար», մարզպետարանի ինտերնետային կայք էջերում, հրապարակվել են մամուլում, փակցվել՝ մարզպետարանի և համապատասխան համայնքապետարանների տեղեկատվական ցուցատախտակներում: Կազմվել և սահմանված կարգով ՀՀ տարածքային կառավարման նախարարություն է ներկայացվել համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների ժամանակացույցերը, կայացած մրցույթների և ատեստավորումների արդյունքները:

Սահմանված ժամկետներում ՀՀ տարածքային կառավարման նախարարություն են ներկայացվել տեղեկատվություններ՝ մրցույթների, ատեստավորումների և

վերապատրաստումների արդյունքների, համայնքային ծառայողների գրանցամատյանում կատարվելիք փոփոխությունների վերաբերյալ:

Ահրաժեշտ մեթոդական օգնություն է ցուցաբերվել համայնքային ծառայողների պաշտոնների նոր անձնագրերի, համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգերի, մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերի, աշխատակազմերի կանոնադրությունների, վերապատրաստման, անձնական գործերի հաշվառման, համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման մատյանների վարման, համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների փաստաթղթերի փաթեթների կազմման աշխատանքներում:

Կիսամյակի ընթացքում ուսումնասիրվել են նաև համայնքների ղեկավարների աշխատակազմերի հաստիքացուցակների ու պաշտոնային դրույքաչափերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը և աշխատանքներ են տարվել համայնքապետարանների աշխատակազմերի քանակը ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից առաջարկված օպտիմալ քանակին համապատասխանեցնելու ուղղությամբ: Ուսումնասիրությունների արդյունքում տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմում առկա այն հաստիքները, որոնց վերապահված գործառույթները ենթադրում են մասնագիտական աշխատանք, համայնքային ծառայությանը բնորոշ գործունեություն, արված առաջարկության համաձայն տեղափոխվել են <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենսդրության դաշտ:

9.1.4. Տեխնիկական ապահովվածության բնագավառ

- Վարչության օրակարգային կարևոր խնդիրներից է եղել մարզի համայնքների տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացումը, համայնքապետարանների աշխատակազմերը համակարգիչներով, ինտերնետային կապով և անհրաժեշտ այլ սարքավորումներով ապահովելը:

2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ մարզի թվով 54 համայնքներում տեղադրված են համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր (ՀԿՏՀ), որոնք համալրված են ՀՀ պետական կառավարման մարմիններում գործող «Mulberry» համակարգի հետ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն իրականացնելու հնարավորություններով: Ներկայումս մարզի թվով 49 համայնքներ արդեն միացված են «Mulberry»-ի համակարգին և աշխատակազմերի փաստաթղթաշրջանառությունն իրականացնում են էլեկտրոնային եղանակով: Շարունակական բնույթ ունեն աշխատակազմերի համապատասխան մասնագետների վերապատրաստման դասընթացները:

Գործընթացի արդյունավետությունն ապահովելու նպատակով համայնքները սերտորեն համագործակցում են «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի հետ:

- Գերմանիայի միջազգային համագործակցության (GIZ) «Համայնքների զարգացում հարավային Կովկասում» ծրագրի տեխնիկական աջակցության շրջանակներում 2014 թվականի առաջին կիսամյակում մարզի թվով 7 համայնքների տրամադրվել են 2-ական նոր ժամանակակից համակարգիչներ, տպիչ սարքեր և այլ սարքավորումներ:
 - 2014 թվականի հունիսի 1-ի դրությամբ մարզի բոլոր համայնքները ապահովված են համակարգիչներով, 106-ն ունեն տպիչ սարքեր, բոլոր համայնքապետարաններում առկա է ինտերնետային կապ և էլեկտրոնային հասցեներ:
- Ինտերնետային պաշտոնական կայքեր են տեղադրված մարզի բոլոր 3 քաղաքային և 38 գյուղական համայնքներում, ապահովվել է դրանց անխափական շահագործումն ու դրանց միջոցով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը:

9.1.5 Քաղաքացիական հասարակություն

Ապահովվել է զանգվածային լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը մարզի խորհրդի նիստերին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող մշտական և ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:

Վարչության կողմից համապատասխան աշխատանքներ են տարվել համայնքներում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգերը հաստատելու և համայնքների ղեկավարներին կից, համայնքների տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգերը հաստատելու վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համապատասխան իրավական ակտերի ընդունման և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ապահովվմանն ուղղված միջոցառումների կազմակերպմանն ուղղությամբ:

9.2 Իրականացման առաջընթացը

1. Բարձրացել է մարզի խորհրդի դերն ու նշանակությունը մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների ներդաշնակ գործունեության ապահովման, տեղեկատվության փոխանակման, կազմակերպական բնույթի հարցերի քննարկման և ընթացիկ խնդիրների լուծման գործում:

2. Վարչական հսկողության բնագավառում նոր պահանջների ու մոտեցումների ներդրմամբ բարձրացել է համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցների պատասխանատվությունը՝ ՀՀ օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների կատարման գործում:

3. Վարչական հսկողության արդյունքում դրական տեղաշարժեր են արձանագրվել համայնքների զարգացման քառամյա ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, արտակարգ իրավիճակների, բնապահպանության, մշակույթի, սոցիալական պաշտպանության, կրթության, առևտրի և ծառայությունների, հողօգտագործման, անասնաբուժության, տրանսպորտի և կապի, ընդերքօգտագործման և այլ բնագավառներում համայնքների ղեկավարների պարտադիր լիազորությունների կատարման գործում:

4. 2014 թվականի առաջին կիսամյակում մարզի համայնքներում կարևորագույն խնդիր է համարվել համայնքներում առկա խնդիրները լուծելու համայնքների կարողությունների շարունակական բարձրացումը և համայնքներին օրենքով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ համապատասխան ֆինանսական միջոցների ապահովումը: Դրանց համար նախապայմաններ են հանդիսացել համայնքների սեփական եկամուտների հավաքագրման շարունակական աճի ապահովումը, ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների աճը, պետական բյուջից տրամադրվող նպատակային հատկացումներն ու օրենքով սահմանված այլ միջոցների ներգրավումը:

5. Ձեռնարկված միջոցառումների արդյունքում, նախորդ տարիների համեմատությամբ, էականորեն բարելավվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ օրենսդրությանը համապատասխան իրավական ակտերի ընդունման գործընթացը:

6. ՀԿՏՀ-ի ներդրման շնորհիվ էապես բարձրացրել է համայնքապետարանների աշխատակազմերի ներքին աշխատանքների արդյունավետությունը և բարեհաճ պայմաններ են ապահովել քաղաքացիների սպասարկման համար:

9.3 Խնդիրները

1. Մարզի զգալի թվով համայնքներում դեռևս ցածր է սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները չունեն բավարար ֆինանսական և տնտեսական կարողություններ համայնքներում նվազագույն ծառայություններ մատուցելու համար:

2. Տեղական ինքնակառավարման համակարգում կարևոր և դեռևս ամբողջությամբ չլուծված խնդիրներից մեկը շարունակում է մնալ համայնքների տեխնիկական զինվածության ցածր մակարդակը (ժամանակակից տեխնիկական միջոցներ, որակյալ ինտերնետային կապի առկայություն, ցանցային ծրագրեր և այլն):

9.4 Քաղաքացիները և հետագա քայլերը

1. Տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացման համար ՏԻՄ-երի լիազորությունների ընդլայնումը, համայնքների ֆինանսական հնարավորությունների բարձրացումը, համայնքների բյուջեների մուտքերի կայունության և շարունակական աճի ապահովումը:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացումը, կառավարման հմտությունների և ունակությունների մեծացմանն ուղղված ուսուցողական ծրագրերի իրականացումը:

3. Տեղական ինքնակառավարման մարմիններին մեթոդաբանական և տեղեկատվական աջակցության տրամադրումը, բոլոր համայնքներում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի ներդրումը, համակարգչային միասնական ծրագրերի, տեղեկատվության և կապի ժամանակակից միջոցներին ապահովումը:

Արտակարգ իրավիճակների կանխարգելում, բնակչության և տարածքների պաշտպանություն, գորակոչային և գորահավաքային առաջադրանքների կատարում

10.1 Քաղաքականության վերլուծություն

ՀՀ Շիրակի մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից մշակվել և իրականացվում է ա րտակարգ իրավիճակների կանխարգելման, բնակչության և տարածքների պաշտպանություն, գորակոչային և գորահավաքային աշխատանքների իրականացման հստակ քաղաքականություն:

Մշակված քաղաքականության համաձայն ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՄԳՀ բաժնի կողմից վարչության 2014 թվականի տարեկան աշխատանքային ծրագրով նախատեսված գործառույթների, մարզպետի ու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի հանձնարարականների կատարման ուղղությամբ 2014 թվականի առաջին կիսամյակում իրականացվել են մի շարք աշխատանքներ:

Բաժինը համագործակցելով հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ՝ աշխատանքներ է իրականացրել մարզում արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների վերացման, զինված ուժերի գորահավաքային նախապատրաստության և գորակոչի իրականացման, պետական սահմանի պահպանության ապահովման ուղղությամբ:

Ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ մարզում բնական և տեխնածին աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ պահանջվող միջոցառումների պատշաճ իրականացումն ապահովելու համար:

10.2 Իրականացման առաջընթաց

2014 թվականի առաջին կիսամյակում ՀՀ ԱԻՆ ՓԾ Շիրակի ՄՓՎ, մարզի ՏԻ մարմինների հետ համատեղ իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված արտակարգ իրավիճակների կանխարգելմանը, բնակչության և տարածքների պաշտպանությանը: Ոլորտում նախատեսված աշխատանքներն իրականացնելու նպատակով ՀՀ Շիրակի մարզպետի կողմից ընդունվել են մի շարք որոշումներ:

- 2014 թվականի փետրվարի 3-ի թիվ 18-Ա որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների մասին» պլանը:

Ճշգրտվել, համաձայնեցվել և հաստատվել են մարզի բնակչության պաշտպանության ոլորտին առնչվող՝ «Քաղաքացիական պաշտպանության Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային», «ՈՒԺեղ

երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գործողություններին», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի անտառներում հակահրդեհային պահպանության ապահովման միջոցառումներին», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2014 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումներին» և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ջրային տարածքներում ջրահեղձման դեպքերի կանխարգելման մասին» պլանները, այդ պլանների իրականացման նպատակով շահագոգիտ մարմինների հետ անցկացվել են խորհրդակցություններ և իրականացվել են դրանցում նախատեսված միջոցառումները:

- 2014 թվականի ապրիլի 17-ին համաձայն ՀՀ Շիրակի մարզպետի 2014 թվականի փետրվարի 21-ի թիվ 31-Ա որոշման, Գյումրի քաղաքում անցկացվել է «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաք տարահանված բնակչության ընդունման և տեղաբաշխման կազմակերպումը» թեմայով շտաբային ուսումնավարժություն, իսկ ՀՀ Շիրակի մարզպետի 2014 թվականի ապրիլի 16-ի թիվ 78-Ա որոշման համաձայն մարզի Փանիկ, Նոր Կյանք, Անուշավան համայնքներում հունիսի 19-ից 20-ը անցկացվել է հրամանատարաշտաբային ուսումնավարժություն՝ «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը սելավի դեպքում» թեմայով:

Համաձայն մարզպետի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2014 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումներին», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ջրային տարածքներում ջրահեղձման դեպքերի կանխարգելման մասին», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի անտառներում հակահրդեհային պահպանության ապահովման միջոցառումներին» պլանների և որոշումների պահանջների՝ տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները և բնակչությունը ներգրավվել են արտակարգ իրավիճակների կանխարգելման և դրանց հետևանքների նվազեցման ու վերացման աշխատանքներին:

2014 թվականի առաջին կիսամյակում ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից կազմակերպական առումով ցուցաբերվել է անհրաժեշտ օժանդակություն՝ 2014 թվականի ուսուցման պլանի համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ակադեմիայում վերապատրաստման դասընթացներում ընդգրկված մարզի տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցների և մասնագետների մասնակցությունն ապահովելու ուղղությամբ:

- Շարունակվել է համագործակցությունը «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամի, ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի և Հայկական կարմիր խաչի ընկերության հետ: 2014 թվականին մեկնարկել է Հայկական կարմիր խաչի ընկերության «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ հարավային Կովկասում» ծրագրի 3-րդ փուլը: Ծրագրում ընդգրկվել են մարզի ևս 4 համայնքներ (Զաջուռ, Բերդաշեն, Չորաշեն, Շիրակավան) ընդգրկված համայնքների թիվը հասցվել է 18-ի: Հաշվետու ժամանակամիջոցում ծրագրում ընդգրկված համայնքներում և Հայկական կարմիր խաչի ընկերության Գյումրու գրասենյակում անցկացվել են հանդիպումներ, քննարկվել են ծրագրի արդյունավետ իրականացման հարցեր:

2014 թվականի առաջին կիսամյակում շարունակվել է նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի Շիրակի մարզի զարգացման ծրագրի կողմից մարզի թվով 24 համայնքներում իրականացվող աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված ծրագրերը, որի շրջանակներում 2014 թվականի մարտի 27-ից 29-ը Աղվերանի «Աղվերան» հյուրանոցում անցկացվել է «Համայնքի կարողությունների և ռիսկերի գնահատման ու աղետների ռիսկերի նվազեցման պլանի մասնակցային մշակման» թեմայով դասընթացը:

Բաժինը կազմակերպչական առումով վերը նշված բոլոր ծրագրերի իրականացմանն իր գործուն աջակցությունն է ցուցաբերել:

ՀՀ Շիրակի մարզի տարածքում նախագորակոչային և գորակոչային տարիքի պատանիների կցագրման աշխատանքների, տեղական գորակոչային հանձնաժողովների կազմերի հաստատման աշխատանքների ապահովման և գորակոչային աշխատանքների պատշաճ կազմակերպմանն ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ: Այդ նպատակով ՀՀ Շիրակի մարզպետի կողմից ընդունվել են 2014 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գորակոչային տեղամասերին 1998 թվականին ծնված և ավագ տարիքի պատանիների կցագրման աշխատանքների նախապատրաստման և անցկացման մասին» թիվ 08-Ա և 2014 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2014 թվականի ամառային գորակոչը կազմակերպելու մասին» թիվ 97-Ա որոշումները:

Աշխատանքներ են տարվում մարզի համայնքների ղեկավարների հետ 2014 թվականի ամառային գորակոչի ընթացքում տարածքային զինկոմիսարիատներին աջակցություն ցուցաբերելու, գորակոչային տարիքի անձանց հաշվառումը պատշաճ կազմակերպելու, հաշվառումից դուրս մնացած անձանց բացահայտելու և զինկոմիսարիատներին համապատասխան տեղեկատվություն ներկայացնելու ուղղությամբ:

2013-2014 թվականների ձմեռային գորակոչի առաջադրանքի համաձայն, նախատեսված 594 գորակոչիկի փոխարեն փաստացի գորակոչվել են 632-ը, կամ նախատեսվածից 38-ով ավելին: Ընթացքի մեջ է 2014 թվականի ամառային գորակոչը: Հունիսի 20-ի դրությամբ նախատեսված 169 գորակոչիկի փոխարեն փաստացի գորակոչվել են 177-ը, կամ նախատեսվածից 8 -ով ավելին:

2014 թվականի հունիսի 17-ին ՀՀ Շիրակի մարզում անցկացված գորահավաքային նախապատրաստության միջոցառումների ժամանակ ռեսուրսների ծանուցումն ու գորահավաքային պլանի համաձայն զինվորական կոմիսարիատների նախնական հավաքակետեր առաքումն իրականացնելու նպատակով Ախուրյանի, Արթիկի և Անիի զինվորական կոմիսարիատներին ցուցաբերվել է անհրաժեշտ աջակցություն:

ԼՂՀ ՊԲ և ՀՀ ՊՆ 5-րդ կորպուսի նախաձեռնությամբ սույն թվականի մարտի 16-ին և հունիսի 21-ին Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում ՀՀ Շիրակի մարզից գորակոչված համապատասխան 127 և 46 զինծառայողների և նրանց ծնողների հանդիպումն ապահովելու ուղղությամբ ցուցաբերվել են անհրաժեշտ աջակցություն:

Անհրաժեշտ աշխատանքներ են տարվել ՀՀ Շիրակի մարզի սահմանամերձ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ու ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչությունների և սահմանապահ ուժերի միջև համագործակցված աշխատանքների ապահովման ուղղությամբ:

Մարզի սահմանամերձ համայնքների ղեկավարներին ցուցաբերվել են համապատասխան աջակցություն՝ սահմանային շերտ մուտքի անցաթղթերի ձեռք բերման համար ներկայացվող փաստաթղթերի կազմման աշխատանքներին:

10.3 Խնդիրներ

Շարունակել համագործակցությունը աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ /ԱՌՆԱՊ/ հիմնադրամի և միջազգային կազմակերպությունների հետ՝ մարզում աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով:

Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում, մարզում բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցման համար պահանջվող միջոցառումների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ միջոցների ձեռնարկում: Համագործակցություն աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ /ԱՌՆԱՊ/ հիմնադրամի և միջազգային կազմակերպությունների հետ՝ մարզում աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացման նպատակով:

ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից կազմակերպական առումով օժանդակության ցուցաբերում մարզի տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցների և մասնագետների 2014 թվականի ուսուցման պլանի համաձայն ՀՀ

արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ակադեմիայում վերապատրաստվող թվով 49 աշխատակիցներին:

Աջակցություն ՀՀ Շիրակի մարզի տարածքում նախագորակոչային և գորակոչային տարիքի պատանիների կցագրման աշխատանքների կազմակերպմանը, տեղական գորակոչային հանձնաժողովների կազմերի հաստատման աշխատանքների ապահովում, աջակցություն գորակոչային աշխատանքների կազմակերպմանը:

10.4 Քաղված դասեր

ՀՀ Շիրակի մարզում բնական աղետներից առավել վտանգ են ներկայացնում երկրաշարժերը, սողանքները, քարաթափերը, սելավները, գարնանային վարարումների հետևանքով առաջացող հեղեղումները, կարկտահարությունները, ցրտահարությունները և ուժեղ քամիները:

Արտակարգ իրավիճակների կանխարգելմանը, բնակչության պաշտպանությանը մեծապես կնպաստի քաղաքաշինության բնագավառում բնակարանաշինական, կրթական, առողջապահական, մշակութային և մարզական ոլորտներում նոր օբյեկտների կառուցման, ամրացման-վերականգնման ծրագրերի իրականացումը սեյսմիկ ռիսկերի գնահատման քարտեզների պահանջներին համապատասխան:

Աղետներից խուսափելու և վնասի չափերը նվազագույնի հասցնելու համար կարևորվում է զանգվածային լրատվական միջոցների՝ հատկապես տեղական հեռուստատեսության դերը բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացման, անվտանգության կանոնների իրազեկման հարցում: Լավ տեղեկացված բնակչությունը մեծ պատասխանատվությամբ է արձագանքում աղետների ռիսկի նվազեցման նպատակով իրականացվող միջոցառումներին:

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. ՏԱՊ- ի արտակարգ իրավիճակներից բնակչության եվ տարածքների պաշտպանության ոլորտի 2014թ. առաջին կիսամյակի գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի փաստացի կատարված ծախսեր

Մլն.դրամ				
Ոլորտը	2014թ.	2014թ.	Փաստացի	Կատարման

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄՁԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

/Ֆինանսավորման աղբյուրը	կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	նախատեսվածի ատեսական բյուջեն	Ֆինանսավորման չափը 01.07.2014թ. դրությամբ	տոկոսը %
Արտակարգ իրավիճակներից բնակչության եվ տարածքների պաշտպանության ոլորտ				
որից՝				
ՀՀ պետական բյուջե, այդ թվում				
սեփական միջոցներ				
վարկային միջոցներ				
միջ. կազմակերպություններ և դոնորներ				
համայնքային բյուջե				
մասնավոր ներդրողներ				
Այլ աղբյուրներ				

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Շիրակի մարզի համայնքների 2014 թվականի առաջին կիսամյակի Ֆոնդային բյուջեներով նախատեսված ծախսերի վերաբերյալ

Աղյուսակ 14

հազ. դրամ

Համայնքների անվանումը	2014թ. Ֆոնդային բյուջեներով նախատեսված ծախսեր	Ֆոնդային բյուջեով փաստացի կատարված ծախսեր առ 01.07.2014թ.	Համայնքների անվանում	2014թ. Ֆոնդային բյուջեներով նախատեսված ծախսեր	Ֆոնդային բյուջեով փաստացի կատարված ծախսեր առ 01.07.2014թ.
Ազատան	35808.2	1475.0	Անի ավան	434.4	434.4
Ախուրիկ	3929.1	280.0	Անի Պեմզա	1.9	0.0
Ախուրյան	30619.7	20378.1	Բազրավան	8156.9	0.0
Այգաբաց	4346.9	735.0	Գուսաննազյուղ	156.0	156.0
Առափի	10032.7	237.0	Իսահակյան	273.5	273.5
Արևիկ	11839.0	9770.0	Լանջիկ	1532.0	750.0
Բասեն/ Մուս./	2314.9	2186.0	Լուսաղբյուր	200.0	200.0
Բայանդուր	2328.8	1073.8	Հայկաձոր	3025.6	0.0
Բենիամին	3306.5	1495.2	Չիթհանքով	2882.2	1690.0
Գետք	12999.2	167.0	Չորակապ	20.0	0.0
ք. Գյումրի	425083.0	53092.8	Մարալիկ ք.	13780.0	11129.9
Երազգավորս	8629.8	1318.8	Շիրակավան	245.9	245.0
Լեռնուտ	197.5	0.0	Ջրափի	2874.1	1360.0

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

Կամո	18092.8	1193.1	Սառնաղբյուր	3629.1	275.0
Կապս	1195.9	300.0	Սարակապ	2612.3	0.0
Կառնուտ	3666.5	0.0	Քարաբերդ	1770.1	0.0
Կարմրաքար	355.4	0.0	Ալվար	1216.3	1216.3
Կրաշեն	0.0	0.0	Աղվորիկ	1690.0	585.0
Հայկավան	16475.0	8500.0	Ամասիա	1816.1	340.0
Հացիկ	209.2	207.0	Արդենիս	0.0	0.0
Հովիտ	500.9	0.0	Արեգնաղեմ	4360.5	0.0
Հովունի	0.0	0.0	Բանդիվան	1495.5	385.0
Ղարիբջանյան	2986.2	260.0	Բերդաշեն	282.7	0.0
Մայիսյան	3229.3	3000.0	Գառնառիճ	367.6	0.0
Մարմաշեն	1665.7	400.0	Բյուրակն	5226.4	20.0
Մեծ Սարիար	370.2	0.0	Գտաշեն	711.9	0.0
Շիրակ	4487.7	80.0	Զարիշատ	2.1	0.0
Ոսկեհասկ	20438.9	869.0	Զորակերտ	870.8	100.0
Զաջուռ	17030.2	390.0	Ծաղկուտ	333.7	160.0
Զաջուռ ավան	88.7	0.0	Հողմիկ	1233.4	0.0
Զրառատ	3161.2	905.0	Հովտուն	84.0	0.0
Վահրամաբերդ	10711.3	9297.5	Մեղրաշատ	30.8	0.0
Փոքրաշեն	464.6	0.0	Շաղիկ	758.5	0.0
Քեթի	9373.6	587.0	Ողջի	256.0	0.0
Անուշավան	4607.4	4607.0	Զրաձոր	2532.3	0.0
Արևշատ	17584.7	17565.4	Աշոցք	20540.4	5985.7
Արթիկ ք.	6718.6	5326.6	Արփենի	3538.5	300.0
Գեղանիստ	4849.5	473.8	Բաշգյուղ	121.0	0.0
Գետափ	316.9	165.0	Բավրա	85.5	0.0
Լեռնակերտ	3200.5	3200.5	Գոգհովիտ	311.4	311.4
Լուսակերտ	10688.3	515.4	Զույգաղբյուր	88.5	0.0
Հայկասար	162.0	0.0	Թավշուտ	2522.1	0.0
Հայրենյաց	2069.5	0.0	Թորոսգյուղ	1139.8	319.3
Հառիճ	2420.6	943.0	Լեռնագյուղ	60.6	0.0
Հոռոմ	19762.6	7060.0	Կարմրավան	0.0	0.0
Հովտաշեն	0.0	0.0	Կաքավասար	0.4	0.0
Մեծ Մանթաշ	12594.6	3114.5	Կրասար	4630.3	197.0
Մեղրաշեն	4520.1	1295.0	Հարթաշեն	1544.0	0.0
Նահապետավան	4340.0	4340.0	Զորաշեն	601.2	0.0
Նոր կյանք	1066.1	460.0	Ղազանչի	702.6	0.0
Պեմգաշեն	6647.7	1725.7	Մեծ Սեպասար	5476.4	0.0
Սարալանջ	1094.3	568.0	Մուսայեյան	251.0	193.3
Սարատակ	5.1	0.0	Սարագյուղ	3.5	0.0
Սպանդարյան	1041.4	600.0	Սալուտ	8.4	0.0

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԶԾ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

Վարդաքար	2160.0	0.0	Սարապատ	322.7	0.0
Տուֆաշեն	5516.9	4125.0	Սիգավետ	0.0	0.0
Փանիկ	6271.0	2906.0	Վարդաղբյուր	413.0	220.0
Փոքր Մանթաշ	212.2	165.0	Ցողամարգ	704.0	90.0
Աղին	886.7	230.0	Փոքր Սարիար	0.0	0.0
			Փոքր Սեպասար	203.7	0.0
Ընդամենը				892,806.9	204,520.0